


ԼՂՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ԱՐՑԱԽ)



- LՂՆ ներկայիս սահմանները
- LՂՆ սահմանադրության 142-րդ հոդվածի համաձայն, «Լիլինգ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի սահմանափակումը պետական տարածքի սահմանների ճշգրտումը հանրային իշխանությանը իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրականացրույթան ներքո»:
- LՂՆ սահմանները 1991թ. սեպտեմբերի 2-ի անկախության հռչակագրի համաձայն
- Արդյունաբերական փաստացի վերահսկողության տակ գտնվող LՂՆ տարածքները
- LՂՆ վարչական սահմանները

մասշտաբ 1:1 000 000
 0 10 20 30 կմ.

Այս համարում

Հայերեն բաժին

- 1- Խմբագրական.....0-5
- 2- Հայաստանի Հանրապետություն.....6
- 3- Արևմտյան Հայաստան.....10
- 4- Սփյուռք.....15
- 5- Միջազգային.....17
- 6- Հասարակական.....17
- 7- Մշակույթ.....19

Պարսկերեն բաժին

- Արցախի պատմություն.....0-3
- Բարիկենդան.....4

Ծափկի առաջին էջում՝ Արցախի Հանրապետություն

Վերջին էջում՝ Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 220, Փետրվար. 2017 No. 220, Feb. 2017

ماهنامه لویس - شماره ۲۲۰ اسفند ماه ۱۳۹۵

Մշակութային եւ հասարակական ամսագիր

ԼՈՒՅՍ

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝
Էդ. Բաղդասարյան
Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Վաչիկ Վարդանյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդումյան,

Սաթենիկ Ավետիսյան, Անդրանիկ Խեչումյան
Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան
Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին
պարտադիր է:

ماهنامه لویس

صاحب امتیاز ، مدیر مسئول و سردبیر: ادیک باغداساریان

نشانی نشریه : تهران صندوق پستی ۱۵۸۷۵-۹۴۸۸

پست الکترونیکی: louys_monthly@yahoo.com

نشانی اینترنت: www.louysonline.com

Քաղաքացիական կռիվները Խորհրդային Հայաստանում 1921 թ. Փետրվարյան արկածախնդրությունը


ԱՄՆ-ի, Անգլիայի եւ Ֆրանսիայի իմպերիալիստները բազմապիսի օգնություն ցույց տալով **Անդրկովկասի** հակահեղափոխական ուժերին, նպատակ էին դրել **ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը** Ֆրանսիական «գերագույն կոմիտար» Ա. Շեւայեն 1920 թ. դեկտեմբերի 16-ին թիֆլիսում մենչեևիկյան վրաստանի Հեռագրատան գործակալության աշխատակցի հետ ունեցած գրույցում հայտարարել է, որ ամբողջ (իմպերիալիստների) աշխարհի շահերը պահանջում են Հայաստանի եւ Ադրբեջանի Սովետական իշխանությունների տապալումը: Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թ. հունվարի 27-ին, անգլիական «Թայմս»-ը գրել է. «Դաշնակների լիդերներն այս ամսի սկզբին թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բուլշևիզմի դեմ...»: Սակայն թերթը միաժամանակ նշել է, որ դրա համար անհրաժեշտ է դրսի օգնությունը դաշնակցականներին:

Նշված իմպերիալիստական պետությունների թելադրանքով եւ օգնությամբ այդ ժամանակ մենչեևիկյան վրաստանում (թիֆլիսում) կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կավկասի Լեռնային Հանրապետության «փրկության կոմիտեներ»:

Այդ ժամանակ Հայաստանի ծայրամասերում սովետական իշխանությունը չէր հասցրել բավարար քաղաքական աշխատանք կատարել: Մյուս կողմից դրույթներն անբարեհավույց էր նաեւ այն պատճառով, որ ռազմական կոմունիզմի քաղաքակա- նություն կիրառման ընթացքում Հայաստանում տեղի ունեցան մի շարք շեղումներ եւ սխալներ:

Հայաստանի Ռեւոլյուցիոն, որի կազմի մեջ խցկվել էին պատեհապաշտ տարրեր, դաշնակցականների եւ մյուս հակահեղափոխական կուսակցությունների նկատմամբ ձեռք չառավ վճռական միջոցներ: Իսկ դաշնակցականների մի մասը, որոնք տակտիկական նկատառումներով քողարկված էին «ձախ» պիտակի տակ, ազատ կերպով ման էին գալիս Սովետական Հայաստանի մայրաքաղաքում եւ մյուս շրջաններում: Նրանցից ոմանք տեղավորված էին սովետական ապարատում, բանակում, նույնիսկ ղեկավար դիրքերում, եւ գաղտագողի դավեր էին նյութում բանվորների ու գյուղացիների պետության դեմ: 1920 թ. դեկտեմբերի կեսերին Երեւանում կազմակերպվում է դաշնակցության անլեզալ կոմիտե: Արկածախնդրության ամբողջ նախապատրաստումը վերցնելով իր ձեռքը, այդ կոմիտեն սերտ կապ է հաստատում Հայաստանի այն շրջանների հետ, որտեղ կենտրոնացած էին իրենց թաքնված ուժերը՝ Բաշ-Գյառնի, Աշտարակ, Էջմիածին, Դարալագյազ:

Հարկ է նշել, որ օգտվելով Սովետական Հայաստանի նորաստեղծ կարմիր բանակում ունեցած ղեկավար դիրքից, Դրոն գաղտագողի իր շուրջն էր համախմբում սովետական իշխանության թշնամիներին:





Քաղաքացիական կռիվները

Հայաստանի կարմիր բանակի շտաբում եւ մի շարք ղեկավար պաշտոններում նա տեղավորել էր դաշնակցական սպաների, որոնք արժեքավոր հետախուզական տվյալներ վերցնելով կարմիր բանակի ուժերի դասավորության մասին, փետրվարյան արկածախնդրության նախօրյակին փախել էին Բաշ-Քյառնի: Դրանց թվում էր Ս. Թարխանյանը (Կուռոն), որը արկածախնդրության ժամանակ գլխավորեց դաշնակցականների զինված ուժերի ռազմական գործողությունները¹:

Հայաստանում իրենց հենակետն էին դարձրել Զանգեզուրը՝ ուր հավաքվել էին Նժդեհ, Ռուբենը եւ անգործ մնացած մաուզերիստներ: Մյուս կողմից կապեր էին հաստատվել Թավրիզի միջոցով անգլիացիների եւ Թիֆլիսի հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը²:

Հայաստանում քաղաքացիական կռիվներն սկսվեցին տարերայնորեն եւ ընդգրկեցին մի շարք շրջաններ, ինչպես Կոտայքը, Բաշ-Քյառնին (Քառնի), Դարալագյազը, Բաշ-Ապարանը եւ Հայաստանի կենտրոնի այլ տարածքներ: Այդ զինված խռովության գլուխ էին կանգնել նախկին խմբապետեր Մարտիրոսը, Կարո Սասունին, Խնկոն եւ ուրիշներ: Փետրվարի 16–18-ը ապստամբները մի շարք շրջաններում իշխանությունը վերցրին իրենց ձեռքը եւ մտան Երեւան: Նրանց օգնեց այն հանգամանքը, որ 11-րդ բանակի գործադարձը դուրս էին բերվել Հայաստանից՝ Վրաստանի խորհրդայնացմանը մասնակցելու համար: Երեւանում ստեղծվեց «Հայրենիքի փրկության» կոմիտե՝ Սիմոն Վրացյանի նախագահությամբ: Վերջինս հրապարակեց հրաման այն մասին, որ «բոլշևիկյան իշխանությունը Հայաստանում վերացված է: Մինչեւ կառավարության կազմվելը ամբողջ իշխանությունը գտնվում է Հայրենիքի փրկության կոմիտեի ձեռքում»:

Խորհրդային Հայաստանի պետական եւ բոլշևիկյան կուսակցության ղեկավար մարմինները Հայաստանի բանակի իրենց հավատարիմ ուժերով եւ 2 զրահագնացքով հեռացան Երեւանից: Նրանք կենտրոնացան Ղամարու (Արտաշատ) - Վեդի-Բասար (Արարատ) շրջանում, ընկնելով ապստամբների շրջապատման մեջ: Խորհրդային իշխանությունը պահպանվեց հիմնականում Համամյուլ (Սպիտակ) - Ղարաքիլիսա (Վանաձոր) - Դիլիջան - Շամաղին (Տավուշ) գոտում:

Ռազմական գործողություններն սկսվեցին ընթացքում էին փոփոխակի հաջողություններով, իսկ ռուսական գործադարձի վերադարձից հետո ուժերի հարաբերակցությունը դասավորվեց ի վնաս ապստամբների: Ռուսական 11-րդ բանակի ուժերով կազմավորվեց Երեւանի ուղղության գործերի խումբ, որը խնդիր ստացավ ճնշել ապստամբությունը եւ գրավել Երեւանը: Երեւանի վրա հարձակումը կատարվում էր Սեւանի եւ Համամյուլի (Սպիտակ) ուղղություններով:

Չհաջողվեց խուսափելու համար 11-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն մարտի 20-ին

վերջնագիր ներկայացրեց «Հայրենիքի փրկության» կոմիտեին: Նույն օրը Թիֆլիսից Երեւան ժամանեց ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նա հանդես էր եկել հողավածներով եւ ներազգային պայքարն ու մարդկային զոհեր տալը համարում էր բախտախնդիրների գործ: Ազգային մեծ գործիչը ցավ էր ապրում ժողովրդի արյունը թափելու համար: Նրա համար գլխավորը համազգային շահերն էին, հաշտությունը, ուստի Կարմիր բանակին եւս կոչ էր անում դադարեցնել անխմաստ պատերազմը: Խորհրդային գործերը ապրիլի 2-ին մտան Երեւան, որտեղ վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:

Ապստամբները, հաշի առնելով ուժերի խիստ անհավասարությունը եւ խուսափելով իրենց նոր զոհերից, այլեւս դիմադրություն ցույց չտվեցին: Նրանք Բաշ-Քյառնիի վրայով նահանջեցին Զանգեզուր, որտեղ շարունակվում էին Քարեզին Նժդեհի ղեկավարած ինքնապաշտպանական մարտերը: Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակն անխուսափելի էր, քանի որ այդ իշխանության թիկունքում կանգնած էր Խորհրդային Ռուսաստանը:

Ապստամբներ միայն կարողացան իրենց ընկերներին բանտարկությունից ազատել: Այնուհետեւ իշխանության գրավումը, ուժերի գոյություն ունեցող հարաբերակցության պայմաններում, հեռանկար չունեցող Հեռեւաբար դաշակ-ցուլության կողմից քաղաքացիական պատերազմի բորբոքումը իզուր արյուն թափել ու զոհեր տալ էր նշանակում եւ չէր բխում ազգային շահերից:

Փետրվարյան արկածախնդրության նախապատրաստման գործում դաշնակցա-կաններին խոշոր չափով օգնել է քեմալական Թուրքիան: Այդ մասին Հայաստանում գործող Կարմիր բանակի գործադարձի շտաբի 1921 թ. փետրվարի ափոփազրում ասված է. «Փետրվարի 16-ին Թուրքական հանձնաժողովի ներկայացուցիչը փորձում էր մե՛նքեւ Շահաթխտ, ընդ որում մոտիկ կա՛րգոսո գործակալների տվյալների համաձայն մեկնելու նպատակն է եղել՝ ապստամբություն բարձրացնել Շահաթխտի եւ Նախիջևանի շրջանում: Նույն տվյալների համաձայն՝ ապստամբությունը նախապատրաստվում էր վաղուց եւ հետեւանք էր դաշնակցականների ու թուրքերի միջեւ տեղի ունեցած հարաբերությունների: Ըստ բոլոր տվյալների, այդ ապստամբությունը կազմակերպված է եւ տարվում է թուրքերի ղեկավարությամբ...»³: Հայաստանի պետական արխիվում կա մի այլ փաստ Փետրվարյան արկածախնդրության նախապատրաստման գործում Թուրքիայի բացահայտ մասնակցության մասին, եւ դա վերաբերում է Հայաստանի Արտաքին գործերի ժողովումիսարի նոտային որը ուղարկվել է Թուրքական բանակի արեւելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին, որում բողոք է ներկայացվում կապիտան Բահաեդդինի (Թուրքիայի արեւելյան ճակատի գործերի հրամանատարություն) ներկայացուցիչը Երեւանում - «Հայաստանի փրկության կոմիտեի» մոտ) վարքագիծը Հայաստանի քաղաքացիական կռիվների կապակցությամբ⁴:

Կա նաեւ, մի այլ փաստ թուրք-դաշնակցական կապերի մասին, այդ խռովության նախապատրաստման գործում:

¹ - ՀժՊ, 4. 7, էջ 138:

² - Նույն տեղում էջ 94:

³ - ՄՄԿՊ Կենտկոմին կից ՄԷԼՍ ինստիտուտի Հայկական Ֆիլիալի արխիվ, 11-րդ բանակի վերաբերող նյութեր, կապուկ 4, գ. 1, թ. 103 (Հ. Կյւրեակյան, Ա. Հակոբյան, նշվ. աշխ. էջ 96):

⁴ - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, Ֆ. 4/114, գ. 102, թ. 22:

կարմիր բանակի հրամանատարական կազմի ներկայացուցիչներից մեկը իր գեկուլցում հիշատակում է, որ մի հանդիպման ընթացքում Սովետական Հայաստանի մասին թուրքերը արտահայտվել են. «... բայց այդ բոլորովին չի քանդում մեր պլանները: Ներկայումս մեր կողմից Հայաստանում նոր հեղաշրջում է պատրաստվում... այն հաշվում որ Հայաստանը լինի Թուրքիայի հովանավորության տակ...»⁵:

Այդ հեղաշրջման փորձը փետրվարյան արկածախնդրու-թյունն էր, որը, սակայն չկարողացավ արդարացնել թուրքական ոճրագործների հույսերը, չնայած նրանց կողմից դաշնակցականներին ցույց տրված ամեն տեսակի օգնությունը:

Ինչ խոսք, որ Թուրքիայի նման քաղաքականությունը խրախուսվում էր Անտանտի, առանձնապես Անգլիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների կողմից, որոնք սիրաշահելով Թուրքիային, նրան պատերազմի էին հրահրում Սովետական Ռուսաստանի դեմ⁶, այդ պատճառով էլ Սեւրի դաշնագիրը չգործադրեցին ի շահ Թուրքիայի եւ նրա հետաքս սպասելիք հանձնարարու-թյունների համար:

Միթե⁶ կասկած կա արեւմտյան իմպերիալիստական պետությունների (Անգլիայի եւ Ամերիկայի գլխավորությունով) հակամարդկային եւ կործանարար քաղաքականության ու պատմական եւ ժամանակակից գործունեության մասին: Հարյուրավոր հատորներ դեռ կարելի է գրել նրանց մասին: Մարդ արարածը կամ հոգով ու սրտով կույր պիտի լինի, որ ակնաթող անի այդ փաստերը, կամ էլ գործակալության գուտ մոլուցք ունենա:

Երբ դաշնակցականներին չի հաջողվում իրենց խռովարարությունը ավարտի հասցնել, մասոնական Սիմոն Վրացյանը դիմում է Թուրքիայի մասոնականների պետության օգնու-թյանը: Նա տեսակցություն է ունենում վերոհիշյալ կապիտան Բահադդինի հետ: 1921 թ. մարտի 1-ին վերջինիս միջոցով Թուրքիայի ազգային ժողովի կառավարությունը Ս. Վրացյանը մի դիմում է ուղարկում, որի մեջ ասվում է.

«Հայրենիքի փրկության կոմիտեն»... խնդրում է Թյուրքիայի ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն ազգերի փոխադարձ շահերի ըստ կարելույն շուտ՝

- 1- Երեսուցի վերադարձնել ռազմաճակատում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին:
- 2- Տալ՝ որոշ պայմաններով՝ հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մատուցելի փամփուշտներ, եւ կամ Բոսի եւ Լեթելի սիստեմի հրացաններ:
- 3- Հաղորդել մեզ, թե արդյոք ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն եւ եթե կարող է, ի՞նչ չափով ու եղանակով եւ ի՞նչ ժամանակամիջոցում:

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված

⁵ - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, քաղվածքների Ֆանդ, 2-րդ մաս, գ. 352, թ. 285:
⁶ - Դիվանագիտական պատմություն, (ռուսերեն), հատոր 3, Մոսկվա, 1945, էջ 9-100:

Ալեքսանդրապոլի դաշնագրից եւ որոնք խանգարվել էին բոլշեիկների իշխանության ժամանակ»⁷:

Կրկնակի ազգային դավաճանություն 3 ամիսների ընթացքում՝ 1920 թ. դեկտեմբերի 2 եւ 1921 թ. մարտի 1:

Դաշնակցական-Թուրքիայի համագործակցության կապերի ամենապարզ եւ խոսուն փաստերից է Պրոմեթեի դաշինքը որը 1921 թվականին սաղմնավորվեց Թավրիզում նույն Ս. Վրացյանի եւ քեմալականների միջեւ եւ 1926 թվականի դեկտեմբերի 29-ին ստորագրվեց Կ. Պոլսում⁸:

Մյուս կողմից դաշնակցականները դիմում են անգլո-ֆրանսիական եւ ամերիկյան իմպերիալիստների ու Իրանի խաների օգնությանը: Սակայն, ոչ մի օգնություն: Դա արդեն շատ ուշ էր:

Խռովության ճնշումից հետո Հայաստանի Ռազմահեղվածք վերակառուցվեց ժողովրդական կոմիսարների խորհրդի (ԺԿՍ), որի նախագահ նշանակվեց Ալեքսանդր Մյասնիկյանը (1886-1925): Նա Հայաստան եկավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշումով: Մինչ այդ նա արդեն ճանաչված գործիչ էր եւ Բեյրութում ու Ռուսաստանում ձեռք էր բերել ղեկավար աշխատանքի մեծ փորձ: Չնայած իր կարճատեւ (չուրջ մեկ տարի) գործունեությանը, նա մեծ դեր խաղաց Հայաստանում քաղաքական լարվածության մեղմացման, հայ մտավորականությանը Հայաստանում համախմբելու, երկիրը խաղաղ շինարարության ուղի փոխադրելու գործում: Այնուհետ եւ Ալ. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս (Անդրկովկասյան Դաշնություն): 1925 թ. նա գոհվեց ինքնաթիռի վթարից⁹:

Ձանգերգուրի բոլոր շրջանները գրավելուց հետո, կարմիր բանակի գորամասերը 1921թ. հուլիսի 13-ին բոլոր կողմերից գրոհեցին Գենվազի (Մեղրի, Արեւելք) կենտրոն՝ Մեղրի գյուղի վրա եւ գրավեցին այն: Այսպիսով ամբողջովին խորհրդայնացավ Ձանգեղուրը, որից հետո ավարտվեցին քաղաքացիական կռիվները Հայաստանում:

Սակայն 1921 թ. դաշնակցականների կազմակերպված փետրվարյան խռովությունը, որը քաղաքացիական կռիվ մեջ քաշեց առանց այն էլ քայքայված երկիրը, գգայի վնաս հասցրեց նաեւ արեւմտահայ գաղթականության հարցի շուրջափուլի լուծմանը:

Փետրվարյան այդ խռովությունը նորանոր ազետներ պատճառեց բազմաչարչար հայ ժողովրդին: Բացի այդ, նրա լիկվիդացման օրերին, գոհ գնալով դաշնակցականների տարածած լուրերին ու սպառնալիքներին, ավելի քան մեկ տասնյակ հազար աշխատավորներ, թողած տուն ու տեղ, անցան Պարսկաստան: Խորհրդային Հայաստանի կառավարությունն ստիպված էր մի կողմ թողնել իր շինարար աշխատանքները եւ ձեռնամուխ լինել դաշնակցական «Հայրենիքի փրկու-թյան կոմիտեի» դիկտատուրայի

⁷ - ՀՀ Պետական Կենտրոնական Արխիվ, Ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 66:
⁸ - Թորգոմ Վեհապետյան, Արեւմտահայաստանի կորուստը եւ Սփյուռքի հայոց ապագան, Բեյրութ, 1990, էջ 26:
 Թորգոմ Վեհապետյան, Պրոմեթեի ուխտը եւ Հովհաննես Քաջազնունու պատգամը ՀՅԴ շարքերին եւ սփյուռքի բովանդակ հայություն, Բեյրութ 1986:
⁹ - Հեղինակների կոլեգիա, Հայոց Պատմություն, Երեւան 1994, էջ 281-282:

յիվիդիոյում, իսկ դրանից հետո՝ Երեւանից եւ այլ վայրերից Պարսկաստան անցան փախստա-կանների վերադարձի կազմակերպմանը:

Սարսափահար փախստականները սկզբում մտադիր էին մնալ Զանգեզուրում, բայց այնտեղ ընկնելով անողոք սովի եւ թշվառութիւնների հորձանուտը խուճապահար շարժվում էին դեպի Պարսկաստան: Յոթ-ութ հազար հոգի Ղարաղաղի վրայով մեկնում են Թավրիզ, մի մասն էլ՝ կիսամերկ ու անոթի, մնում է սահմանի մոտ, Արաքսի ափին: Զանգեզուր ավազակախմբեր կողոպտում են նրանց մինչեւ վերջին շապիկը, շատերը խեղդվում են գետն անցնելիս կամ սովամահ լինում: Թավրիզ մեկնածները, կարճ ժամանակում վերջնականապէս համոզվում են, որ փրկութեան ոչ մի ելք չունեն, եթե ոչ տուն վերադարձը, ուստի շուտով ետ են գալիս Զուլֆա եւ այնտեղից խնդրում խորհրդային Հայաստանի կառավարութեանը՝ հնարավորութեան տալ իրենց վերադառնալու հայրենի օջախները եւ գրադրելու խաղաղ աշխատամքներով¹⁰:

1921 թ. ապրիլի 25-ից սկսած Արաքս գետի տարբեր հատվածներով, գլխավորապէս Մեղրի գյուղի վրայով Պարսկաստան է անցել ավելի քան 8,000 փախստական: Այդ փախստականների մեծամասնութիւնը կենտրոնացել էր Թավրիզում եւ նրա շրջակայքում: Նույն թվականի մայիսի վերջերից Հայաստանի խորհրդային կառավարութեան ջանքերով սկսվեց փախստականների հայրենադարձութիւնը եւ մայիս-հուլիս ամիսներին հայրենիք էր վերադարձել շուրջ 4,000 հոգի:

Թավրիզում ապաստան էին գտել Հայաստանի առաջին Հանրապետութեան բազմաթիւ պետական, կուսակցական, ռազմական, հասարակական գործիչներ՝ ՀՀ Բյուրո-կառավարութեան անդամները, «Հայրենիքի փրկութեան կոմիտե» իր ղեկավարներով եւ բոլոր անդամներով, Լեւոնհայաստանի կառավարութեան անդամներ, մի քանի տասնյակ վաշտապետներ, Հայաստանի խորհրդարանի անդամներ: Այստեղ էին Հովհ. Քաջազնունին, Սիմոն Վրացյանը, Համո Օհանջանյանը, Ռուբեն Տեր-Մինասյանը, Կարո Սասունին, Համբարձում Տերտերյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը, Ավետիս Սահակյանը (Հայր Աբրահամ), Վահան Մինախորյանը, Արշամ Խոնդկարյանը, Արշալույս Աստվածատրյանը եւ ուրիշներ:

Մեծ թիւ էին կազմում հայ մտավորականները, ուսուցիչները, խմբագիրները, բժիշկները, փաստաբանները եւ գաղափարային գործիչները: Թավրիզում էին սկրեմիկոս Այեքսանդր Թամանյանը, Նիկոլ Աղբալյանը, Մալխասը եւ այլք: Նժդեհն ուղիղ գնացել էր հայկական Մուստաֆայի գյուղ: Նա Ղարաղաղի խան Ամիր Արշադին նվիրեց նախապէս պարսկական ափր անցկացրած 4 թնդանոթ եւ գնդացիներ:

Հայրենիք վերադառնալու գաղափարը օրեցօր ընդգրկում էր փախստականութեան նորանոր գանգվածներ: Թավրիզում եւ նրա շրջակա բնակավայրերում կուտակված տարագիրներին վիճակված էր կրելու տնտեսական անասելի դժվարութիւններ: Նրանց ապաստան տալու եւ նյութապէս ու բարոյապէս աջակցելու համար անգնահատելի դեր է

ստանձնում Ներսէս արք. Մելիք-Թանգյանը: Դեռ Կարմիր բանակը նոր էր գրավել Ղափանի հանքերը, երբ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան (ՀԽՍՀ) կառավարութեանը Գրիգոր Վարդանյանին հրահանգեց անմիջապէս մեկնել Թավրիզ եւ իրեն Գաղթականութեան կոմիտեի լիազոր՝ շարունակել փախստական աշխատավորութեան հայրենիք վերադարձնելու գործը: Հուլիսի 21-ին Վարդանյանը իր տեղակալ Հայկ Ղազարյանի հետ հասնում է Թավրիզ, ուր խուճած էին 4,000-ից ավելի փախստականներ: Գրիգոր Վարդանյանը Թավրիզ գալուց մի քանի օր հետո՝ հուլիսի 27-ին ՀԽՍՀ արտգործկոմ (Արտաքին գործերի կոմիտար՝ նախարար) Ասքանազ Մուսկանին գրում էր, որ «Հայաստան վերադառնալու համար ցուցակագրվել է 4,200 հոգի, բոլորն էլ աշխատավոր գյուղացիներ:.... Համաձայնվեցի ումանց անցագրեր տալ եւ Մեղրի գծով ետ ճամփել: Մնացած 900 նորեկների մասին, որ Երեւանի շրջաններից են, կսպասեմ Ձեր կարգադրութեանը»: Վարդանյանը Ա. Մուսկանին իր օգոստոսի 9-ի գրած նամակում տեղեկացնում է, որ այդ օրը ճամփա է դրել եւս 2,000 գանգեզուրցի դեպի Մեղրի իրենց եկած ճամփով: Նա խնդրում է Երեւանին ուղարկել գնացքներ: Սակայն նրանք տեղ չէին հասնում գաղթականներին փոխադրելու համար:

Հարկ եղավ սպասել 22 օր, բայց այդպէս էլ գնացքներ չեկան եւ ոչ մի մարդու հնարավոր չեղավ ճամփել: Վարդանյանը ստիպված է լինում դարձյալ անցաթուղթ տալ մոտ 180 գանգեզուրցիների եւ Մեղրի ճամփել Ղարաղաղի եւ Մուստաֆայի վրայով տուն ուղարկել: Զանգեզուրի նորաստեղծ իշխանութիւնները նրանց ընդունեցին շատ սիրալիր եւ Գ. Վարդանյանին նամակով խնդրեցին ետ ուղարկել նաեւ մնացած գանգեզուրի փախստականների: Նրանից հետո գանգեզուրցիների հաջորդ խումբը եւս բաղկացած 63 հոգուց, նույն ճանապարհով ուղարկեց տուն:

Վերջապէս Ա. Մուսկանը մի պաշտոնական գրութեամբ Գ. Վարդանյանին հայտնում է, որ Երեւանը հնարավորութեան չունի գաղթականների համար առանձին գնացք ուղարկել, ուստի պետք է աշխատել մաս-մաս նրանց ճամփել Զուլֆա, իսկ այնտեղից Երեւան բերել գանգեզուրցիներով:

Այս հրահանգից հետո պարսկական երկաթուղային վարչութեան հետ համաձայնութեան գալուց հետո (ամեն մի գաղթականի համար 25 դրանի փոխարեն վճարել 10), օգոստոսի 12-ից վերսկսվեց վերադարձի հոսանքը, որն անարգել շարունակվեց մինչեւ 1921-թ. սեպտեմբերի վերջը: Յուրաքանչյուր գնացքով հայրենիք էր վերադառնում 200-ից 400 մարդ: Գնացքները Թավրիզից Զուլֆա էին գնում շաբաթական 2-3 անգամ:

Օգոստոս ամսվա ընթացքում Գ. Վարդանյանի ստորագրութեանը կրող անցագրերով Թավրիզից Հայաստան գնաց 2,400 հոգի, հուլիս- օգոստոս ամիսներին կազմելով 5,500 մարդ: Այդ ընթացքում էր, որ Հայաստան վերադարձավ նաեւ մտավորականների մի մեծ խումբ: Նրանց մէջ կային ոչ քիչ թիւով բարձրորակ մասնագետներ: Ակադ. Այ. Թամանյանին վերադարձնելու համար Այ. Մյասնիկյանի համաձայնութեամբ Թավրիզ գնաց Սարգիս Լուկաչինը (Սրայիոնյան) եւ հատուկ գնացքով Երեւան փոխադրեց մեծ ճարտարապետին:

¹⁰ - Հ. Ու. Մելիքեթեան. «Արեւմտահայերի բռնադատումը եւ սփյուռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան», Երեւան 1975, էջ 82-83:

Գ. Վարդանյանի գլխավորած ՀԽՍՀ գաղթական գործերի լիազոր ներկայացուցչությունը օգոստոսի վերջին դադարեց իր գործունեությունը եւ գործը սկսեց իրականացնել Ատրպատա-կանում ՌԽՍՖՀ գլխավոր հյուպատոսությունը: 1921 թ. սեպտեմբերի 2-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը նրա միջոցով Հայաստան ուղարկվեց հետեւյալ թվով փախստականներ. հայեր՝ դիմում է ներկայացրել 2052 մարդ (1136 ընտանիք) որոնցից ստացել են անցագրեր 1927 մարդ (1037 ընտանիք), Նախիջևանի երկրամաս 36 հայ (11 ընտանիք):

Միայն քաղաքացիական ընդհարումների հետեւանքով գաղթած տարագիրներից Թավրիզում դեռ մնում էր մոտ 1,200 մարդ: 1921թ. հոկտեմբերի վերջին այդ ցուցակի մեջ ընդգրկված էր Խորհրդային իշխանության համար անընդունելի 668 հոգի, որը ղեկավարներ ամսին այդ ցուցակի էլ ավելի կրճատվեց՝ թողնելով 460 հոգու: Նրանցից 200-300 հոգուն վիճակված էր էլ ավելի հեռանալ հայրենիքի սահմանակից երկրից, որոնց մի մասը բնակություն հաստատեց Պարսկաստանի մյուս քաղաքներում, արեւմտյան զինվորները հիմնականում բռնեցին Բաղդադի ճանապարհը՝ Միջագետքում փնտրելու կորցրած հարազատներին, մյուսները հետագա ամիսներին ցրվեցին Պարսկաստանից դուրս՝ գանազան կողմեր:

1921 թ. օգոստոսի 13-ին ՀԽՍՀ արգործողիւմ Ա. Մուսաբեկը հետեւյալ հեռագիրն էր հղել Թեհրան՝ Իրանի արտգործնախարարին (պատճենը՝ ՌԽՍՖՀ եւ ՀԽՍՀ լիազոր ներկայացուցիչ Ռոտշտեյնին):

«Մեր ունեցած հավաստի տեղեկություններով ժողովրդական վրեժխնդրությունից փախած Հայաստանի տապալված կառավարության նախկին անդամները եւ այսպես կոչված փրկության կոմիտեի անդամները, ինչպես նաեւ գանգեզուրի ապստամբների առաջնորդները ներկայումս ապաստան են գտել Պարսկաստանում, մասնավորապես՝ Թավրիզում: Դարձնելով Թավրիզն իրենց կենտրոն, այդ պարոնները ոչ մի միջոցից չեն խորշում շարունակելու համար հայ ժողովրդի օրինական բանվորագույնացիական կառավարության դեմ հանցավոր պայքարը, դրանով իսկ խոչնդոտելով մեր հանրապետությունում խաղաղության եւ կարգի հաստատմանը: Հայաստանի կառավարիչների ընդհատակյա գործունեությունը Պարսկաստանում սկսվել էր դեռեւս ապրիլին, որտեղից նրանք ղեկավարում էին ապստամբական շարժումը Ձանգեզուրում»:

Այնուհետեւ հեռագրում ասված էր.

«Մեզ խիստ զարմացնում է, որ մինչեւ այժմ պարսկական իշխանությունների կողմից ոչ մի միջոց չի ձեռնարկել պայքարելու այդ երեւույթի դեմ, որը սպառնում է ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլեւ Պարսկաստանի անդորրությունը: Հանուն Խորհրդային Հայաստանի եւ Պարսկաստանի մինչեւ հաստատված բարիդրացիական հարաբերությունների, իմ կառավարությունը դիմում է Ձեզ՝ վճռական միջոցներ ձեռք առնելու Հայաստանի նախկին իշխանությունների եղկելի աշխատանքը դադարեցնելու եւ նրանց Պարսկաստանի սահմաններից վճռելու համար:

Ընդունեցե՛ք Ձեր նկատմամբ հարգանքի հավաստիացումներս»¹¹:

Իր հերթին ՌԽՍՖՀ արտաքին գործոց կոմիսար Գ. Վ. Չիչերինը, անշուշտ Հայաստանի կառավարության խնդրանքով, 1921 թ. սեպտեմբերի 30-ին նոտա է հղում (N11/5163) Պարսկաստանի արտաքին գործոց նախարար Մուշարու Ազամին, անհանգստություն հայտնելով, որ պարսկական իշխանությունները շարունակում են հանդուրժել իրենց տարածքում հայկական հակախորհրդային գինված խմբերի ներկայությունը, որոնք վտանգ են ներկայացնում Խորհրդային Հայաստանի անվտանգությանը: Մասնավերապես շեշտված էր, որ Ամիր Արշադը եւ նրա եղբայր Սարգար Արշադը սերտ հարաբերությունների մեջ են Վրացյանի հետ, մի բան, որ Մոսկվայում տեղիք է տալիս լուրջ խորհրդածությունների:

ՌԽՍՖՀ-ում պարսկական դեսպան Մուշապեր ուլ Մամայիքը հոկտեմբերի սկզբին Չիչերինին է հանձնում իր երկրի արտգործնախարարի պատասխանը, որտեղ ասված է, որ «Ամիր Արշադի եւ Վրացյանի կոմիտեի փոխհարաբերությունների վերաբերյալ Ռուսաստանի արտգործնախարարությունը կտրվի հանգամանալից պատասխան, իսկ ինչ վերաբերում է Պարսկաստանում ապաստանած հազարավոր հայերին, ապա նրանք հասել են այնտեղ «կատարեապես անգնեւ եւ ուզում են միայն կյանքի ապահովություն՝ վերադառնալու համար իրենց տեղերը»¹²:

Գալով գինված հայ միավորների հարցին, Մուշար ուլ Ազամին գրում էր. «Պարտքս եմ համարում Ձեզ հայտնել, որ վերոհիշյալ միավորները, եթե այդպիսիք գոյություն ունեն, պիտի կազմված լինեն պարսկահպատակ հայերից, որոնք համաձայն մեր երկրի սահմանադրական օրենքների, ունեն հավասար իրավունքները եւ այդ հիմունքներով ծառայում են կազակների, ժանդարմերիայի եւ այլ գորամասերի մեջ, որոնց մասին տեղյակ է պարսկական կառավարությունը»¹³:

Հետագա ամիսներին նույնպես Երեւանի կառավարությունը շարունակում էր ակնդետ հետեւել Թավրիզի դաշնակցականների գործունեությանը եւ հետապնդում էր նախկին նպատակը՝ որքան հնարավոր է նրանց շուտ հեռացնել Խորհրդային Հայաստանի սահմանակից երկրից:

1921 թ. դեկտեմբերի 11-ին Թավրիզում Խ. Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Լեւոն Սարգսյանը նամակ է ուղարկում Թեհրան, Պարսկաստանի արտաքին գործերի նախարար Մուշար ուլ Ազամին՝ բողոքել այդ երկրում դաշնակցների շարունակվող հակախորհրդային գործունեության դեմ: «Մասնավորապես, գրում է նա,- օգտվելով Ատրպատականի ներկա խառնակությունից, նոքա իրենց հայտարարել են որպես Հայաստանի պաշտոնական մարմին եւ նույնիսկ այժմս, երբ պարսից պետությունը Իսմայիլի աղա Սմկոյի ըմբոստությունից դեմ պատրաստությունների գործով է գրավված, վերոհիշյալ ղեկավարները եռանդ ու ջանք են գործադրում եւ Հայաստանի գինվորական ծառայողների հրամանատարության տակ Թավրիզ փախած գործից, ինչպես եւ պարսկահպատակ հայերից խմբեր են կազմակերպում, որպեսզի հարմար առիթին հարձակում գործեն Հայաստանի վրա: Ես համոզված եմ, որ մինչեւ այդ գաղտնի կառավարության բոլոր անդամները եւ գործիչները

¹¹ - Արամ Սիմոնյան, «Պարսկաստան անցած հայ փախստականների վիճակը 1921թ. հուլիս-նոյեմբերին», Իրան Նամե Երեւան, 1998, համար 1-2-3 (29-30-31) էջ 67:

¹² - Նույն տեղում:
¹³ - Նույն տեղում:

Թավրիզից դուրս չքշվեն եւ չարտաքսվեն, մեր երկու բարեկամ եւ հարեւան պետութիւնների բնակչութեան կացութիւնը հավասարապէս վտանգված կլինի: Հուսով եմ որ Ձերոյ գերագանցութիւնը այս մտերմական հիշատակագրութեան մասին կտեղեկացնի նաեւ Ատրպատականի նահանգապետութեանը եւ կպահանջի նրանից, որ նա վերահիշյալների խռովահոգ գործողութիւնների սանձահարման համար համապատասխան կարգադրութիւն անի»¹⁴:

Ի պատասխան այս նամակին, Պարսկաստանի արտգործնախարարը գրում է, որ Թավրիզում մնացել է ընդամենը 1200 կովկասահայ փախստական եւ Հայաստանի նախկին պետութեան ղեկավարներից վեց հոգի: Դրանց կեսը պատրաստ է, ապահովութիւն ստանալուց հետո, վերադառնալու իր ծննդավայրը, մյուս կեսը տրամադրութիւն չունենալով վերադառնալ Հայաստան, պատրաստ է Թավրիզից հեռանալ Պարսկաստանի խորքերը, այնտեղ, ուր հարմար կգտնի պարսից կառավարութիւնը: Նախարարը ավելորդ չէր համարում շեշտել, որ Թավրիզում մնացած կովկասահայերը «ամբողջապէս գտնվում են ճնշված տրամադրութեան մեջ եւ վարում են չքովոր, չարքաշ կյանք», որ նրանք երբեւիցե խռովութիւն ստեղծելու նպատակ չեն ունեցել եւ չունեն»: Ինչ վերաբերում էր Խորհրդային Հայաստանի յիսգոր ներկա-յացուցչի այն պնդումներին, թէ դաշնակները կազմակերպում են զինված խմբերի, դրան ի պատասխան պարսիկ նախարարը գրում էր. «Այդ լուրը անհիմն է, նոքա բոլորն էլ զինաթափ են եղել Ղարաբաղում եւ ոչ մեկը նրանցից գենք չունի: Հայոց պետութեան վախը նրանցից ոչնչով չի պատճառաբանվում եւ ոչ մի կազմակերպումն ընդդեմ պետութեան տեղի չի ունեցել: Երբ Իսմայիլ աղա Սմկոյի դեմ պատերազմական պատրաստութիւններ էին տեսնվում, պարսկահպատակ սարմատեցի եւ Ուրմիայի հայերի մի որոշ մասը զինվեց եւ ընդունվեց պատերազմական ծառայութեան մեջ: Միայն երկու հոգի Ձանգեզուրի հայերից, որ պարզվեց հետո, մտել էին պարսից գործի մեջ եւ նրանց մասին էլ Ատրպատականի նահանգապետութեան կողմից հրաման եղավ գործից դուրս հանելու: Հիշատակելով վերոգրյալը, ես հուսով եմ, որ դեպի հայ փախստականները մեր կառավարութեան կողմից ցուց տված կարեկցութիւնը չի կարող, հակառակ սպասողութեան, ծագում տալ անցանկալի երեւոյթներ»¹⁵:

Թեեւ պարսկական իշխանութիւններն ընդհանուր առմամբ հանդուրժողարար եւ լուրջնումով էին վերաբերվում փախստական ղեկավար գործիչներին ու մտավորականներին, բայց Մոսկվայից եւ Երեւանից եկած նոտաների ազդեցութեան տակ սկսել էին անհանգստանալ եւ եկվորներին հասկացնել տալ, որ իրենց երկրում այլեւս անցանկալի է նրանց ներկայութիւնը: Հատկապէս մի քանի անգամ նախագգուչացումներ արեց Ատրպատականի նահանգապետ Մուխտար Սայտանեն:

Իրենց հերթին անհանգիստ էին նաեւ տնտեսական-կենցաղային տառապանքներ կրող գործիչներն ու մտավորականները: Նրանք ոչ առանց հիմքի վախ էին գգում, որ մի օր իրենք կհայտնվեն սահմանից այն կողմ՝ Երեւանի բանտում:

Թավրիզի գաղթականութեան մասին Այ. Մյասնիկյանին ներկայացրած գեկուցագրի մեջ հայկական բանակի հետախու-

զութիւնը դեռեւս օգոստոսի 11-ին գրել էր, որ Փրկութեան կոմիտեի եւ Սյունիքի կառավարութեան ղեկավարները վախ ունեն թէ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը կարող է պարսկական կառավարութիւնից պահանջել իրենց հանձնել նրանց, պատճառաբանելով, որ զանգեզուրյան կռիվների ժամանակ պարսկական կողմի գիտութեամբ Լեւնահայաստանի կառավարութեան անդամները եւ Փրկութեան կոմիտեի վարչապետը գտնվել են Թավրիզում եւ այնտեղից ամբողջ ժամանակ հանձնարարականներ են ուղարկել Ձանգեզուր՝ դրանով իսկ խախտելով Պարսկաստանի չեզոքութիւնը:

Այդ երկուդից դրդված եւ Երեւանի մտադրութիւնների մասին ստույգ տեղեկութիւններ ստանալու նպատակով Թավրիզում ստեղծվել էր հակահետախուզութիւն, որի ղեկավարն էր դաշնակցական Դարասամխոն (դերասան Մխոն):

Միաժամանակ դաշնակների ղեկավարութիւնը հանդես եկավ հատուկ հայտարարութեամբ այն մասին, որ եթէ գործիչներին ու մտավորականներին Հայաստան տանելու քայլեր, կամ եթէ խորհրդային գործակալների կողմից անարեկման փորձեր արվեն, ապա դաշնակցութեան հատուկ ծառայութիւնները ինչպէս Պարսկաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչների, այնպէս էլ բուն Հայաստանում՝ խորհրդային կուսակցական եւ պետական ղեկավար գործիչների նկատմամբ կդիմեն մասսայական անարեկցական ակտերի:

Որպէս այդ ամենի հետեւանք, զնալով արագացավ գործիչների եւ մտավորականների հոսքը Թավրիզից դեպի հեռուներ: Մեկնում էին առավել վտանգված քաղաքական գործիչներ, ապա՝ մյուս մտավորականները:

Ամենից առաջ, դեռ 1921 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, Պարսկաստանից դուրս եկան Համո Օհանջանյանը, Շանթը եւ Բախչի Իշխանյանը: Նոյեմբերի սկզբին Թեհրանից Եվրոպա մեկնեց Վրացյանը: Նոյեմբերի 22-ին Նոթեհէր Թավրիզից անցավ Թեհրան եւ քանի օր այնտեղ մնալուց հետո մեկնեց Բուլղարիա, նրա հետ էին խմբապետ Քաշալ Կարոն եւ ուսանող Հայկը:

Մի քանի տասնյակ «վտանգվածներ», այնուամենայնիւ, որոշեցին մնալ Պարսկաստանում: Իշխանութիւնների թուլւթիւնով Թեհրան Ստեփանյանը մի քանի զինակիցների հետ նոյեմբերին Թավրիզից մեկնեց Ղարաղալ եւ մշտական բնակութիւն հաստատեց այնտեղ: Նույն կերպ վարվեց նաեւ Յապոնը (Հովհաննես Պարոնյան), որը հաստատվեց Մուսթուքը հայկական գյուղում:

Թավրիզում մնացին մտավորականների ու գործիչների մի փոքր խումբ եւ մի քանի հարյուր շարքային տարագիրներ: Հիմնավորվելով այստեղ, նրանք պատահական նպատակներով մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյութիւնը, մինչեւ որ տարիների ընթացքում համառ աշխատանքով հաղթահարեցին տնտեսական եւ այլ կարգի դժվարութիւններ: Քաղաքում սկսվեց գործել հայկական զիմնագիտ, լույս էին տեսնում թերթեր, կազմա-կերպվեցին դասընթացներ, հիմնվեցին արհեստանոցներ, բացվեցին խանութներ: Այդ ամենի շնորհիւ կենդանութիւն առավ գալուական կյանքը:

Պարսկաստանի իսուլ գալուներ անցած գաղթականները եւս աստիճանաբար թոթափեցին բարդութիւնները, լծվեցին գանազան աշխատանքների եւ իրենց քրտինքով ստեղծեցին տանելի պայմաններ:

¹⁴ - Նույն տեղում:
¹⁵ - Նույն տեղում էջ 68:

Հ. Յ. Դաշնակցութեան Գերագույն մարմինը, որը 1921թ. փետրվարյան ապստամբութեան հետո փոխարինել էր Հ.Յ. Դ. Բյուրոյին, իր ժամանակավոր նստավայրից՝ Բուխարեստից (Ռուսիան) Թավրիզում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարութեանը խորհուրդ տվեց ինքնալուծարվել: Կառավարութեանը շարունակեց իր գոյութեանը մինչև 1921 թ. հոկտեմբերի 11-ը:

Այդ օրը բազմամարդ դահլիճը լուծարքի ենթարկվեց՝ նախապես վարչապետ Սիմոն Վրացյանին յիստորելով կազմել 3-5 հոգուց բաղկացած դահլիճ գլխավորապես տարագրության գործերին հսկելու համար: Նույն օրը Ս. Վրացյանը կազմում է 3 հոգուց բաղկացած «դահլիճ»՝ Ս. Վրացյան, Հ. Տեր-Հակոբյան, Վ. Մինախորյան կազմով, որը հաջորդ օրը, հոկտեմբերի 12-ին անցնում է գործի: Երկու օր հետո, հոկտեմբերի 14-ին, Սիմոն Վրացյանը մեկնում է արտասահման եւ «դահլիճում» մնում են երկու հոգի, որոնք իրենց պաշտոնը շարունակում են մինչև 1923 թ. սեպտեմբերի 24-ը, այսինքն մինչև կառավարութեան վերջնական լուծարումը¹⁶:

Հայաստանի Հանրապետություն

Գերմանական KfW բանկը 5,3 միլիոն եվրո կհատկացնի Հայաստանի գյուղատնտեսության ապահովագրության համար

Գերմանական KfW բանկը 5,3 միլիոն եվրո դրամաշնորհ կհատկացնի գյուղատնտեսության ապահովագրմանն աջակցելու նպատակով: Այս մասին հայտնել է Հայաստանում KfW բանկի ծրագրերի համակարգող Բելա Անդրիասյանը: Գումարները կհատկացվեն այս տարի՝ 2018-21 թվականներին պիլոտային ծրագրով բաշխվելու նպատակով: Սպասվում է, որ գյուղատնտեսության ապահովագրության աջակցության ծրագրին իր մասնակցությունը կունենա նաև Հայաստանի կառավարությունը:

Թե ինչ ռիսկերից են ապահովագրվելու հայ գյուղացիները (կարկուտ, երաշտ, անասնահոտի անկում եւ այլն), վնասի ինչ չափի սահմաններում եւ ինչ հատուցում կստանան՝ որոշելու է խորհրդատվական ընկերությունը, որի ընտրության միջազգային մրցույթը KfW բանկը արդեն հայտարարել է: Մինչև տերմվերջ խորհրդատուն պետք է ավարտի հետազոտությունները, քանի որ պիլոտային ծրագիրը պետք է մեկնարկի 2018-ի սկզբին:

Հաշվի առնելով Հայաստանի գյուղատնտեսության բարձր ռիսկայնությունը եւ ոլորտի ապահովագրության փորձի պակասը՝ Գերմանիայի կառավարությունը կօգնի ներգրավել միջազգային ապահովագրողի, որը կհամաձայնի կիսել հայաստանյան ապահովագրողների ռիսկերը:

Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ֆինլանդիայի եկեղեցիների միջեւ եղբայրական կապեր կան. Գարեգին Բ

Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում փետրվարի 1-ին, ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արյա Ինկերի Մակոնենին (նստավայրը՝ Հելսինկի): Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգից հայտնում են, որ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների եւ տարբեր ոլորտներում գործակցության զարգացման կապակցությամբ՝ ընդգծելով, որ այդ բարեկամական հարաբերությունների արտահայտությունն են նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Ֆինլանդիայի եկեղեցիների միջեւ առկա եղբայրական կապերը:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ վերհիշեց 2015 թվականին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի արարողություններին Ֆինլանդիայի Ուղղափառ եւ Լյութերական Եկեղեցիների պատվիրակությունների բերած մասնակցությունը:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաև անդրադարձավ 2004 թվականին Ֆինլանդիա կատարած իր այցին, հանդիպումներին Եկեղեցիների առաջնորդների եւ փոքրաթիվ հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Դեսպան Արյա Մակոնեն իր հերթին նշեց, որ իր համար մեծագույն պատիվ է գտնվել Մայր Աթոռում ու հանդիպել Հայոց Հովվապետին: Նա վստահություն հայտնեց, որ հնարավոր ամենը կանի, որպեսզի բարեկամական կապերն էլ ավելի զորանան եւ Հայաստանն ու Ֆինլանդիան փոխադարձաբար ավելի ճանաչելի դառնան միմյանց համար:

Չրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց դեսպանի հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու առաքելությանը, սոցիալական ու կրթական գործունեությանը, ինչպես նաև հայ ժողովրդի առջև ծառայած ժամանակակից մարտահրավերներին ու դրանց հաղթահարման հրամայականներին: Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը նորանշանակ դեսպանին հաջողություններ մաղթեց դիվանագիտական իր առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Գերաշնորհ Ս. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հոգեշնորհ Ս. Ծախե Ծայրագույն վարդապետ Անանյանը»,-ասվում է հաղորդագրությունում:

Հայկական բանակի 25-ամյակը նշել են ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում

Փետրվարի 1-ին ՀՀ բանակի կազմավորման 25-ամյակի առթիվ ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում կազմակերպվեց պաշտոնական ընդունելություն՝ ՆԱՏՕ-ում ՀՀ մշտական

¹⁶ - Նույն տեղում, էջ 68: Օգտագործվել են Հայաստանի Պետական կենտրոնական Արխիվի փաստաթղթերը:

ներկայացուցչի, Բելգիայում ՀՀ դեսպանի եւ ՆԱՏՕ-ում ՀՀ ռազմական ներկայացուցչի կողմից:

Ընդունելությանը մասնակցեցին ՆԱՏՕ-ի անդամ եւ գործընկեր երկրների դեսպաններ, այլ դիվանագետներ, բարձրաստիճան գինվորականներ, ՆԱՏՕ-ի միջազգային քաղաքական եւ ռազմական անձնակազմերի պաշտոնյաներ: Ողջունի իր խոսքում ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության ղեկավար, դեսպան Արմեն Եղիզարյանն անդրադարձավ ՀՀ Չինված ուժերի ստեղծման պատմությանն ու քառորդարյա փառահեղ ճանապարհին, Հայաստանի որդեգրած միջազգային ռազմաքաղաքական համագործակցության ուղենիշներին, Հայոց բանակում ընթացող բարեփոխումների գործընթացին, Ազգ-բանակի հայեցակարգին:

Խոսելով Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների մասին՝ դեսպան Եղիզարյանը վստահություն հայտնեց, որ դրանք ապագայում էլ կշարունակեն զարգանալ կայուն եւ փոխշահավետ կերպով:

Freedom House. Հայաստանը մասամբ ազատ երկրների շարքում է

Ըստ Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության զեկույցի, Հայաստանը շարունակում է դասվել մասամբ ազատ երկրների շարքում:

Կազմակերպությունը իր հեղթական տարեկան զեկույցում ներկայացրել է աշխարհի 210 երկրների եւ չճանաչված պետությունների քաղաքական եւ քաղաքացիական ազատությունների իրավիճակը: Freedom House-ի գնահատականներով, Հայաստանը ստացել է 45 միավոր 100-ից եւ հայտնվել մասամբ ազատ երկրների շարքում:

Կազմակերպության փորձագետների համաձայն, քաղաքացիական ազատությունների մակարդակը Հայաստանում ավելի բարձր է քաղաքական իրավունքների իրագործման մակարդակից: Հայաստանում քաղաքացիական իրավունքների մակարդակը գնահատվել է 4, քաղաքական իրավունքների մակարդակը՝ 5 միավոր: Նշվում է, որ 2016 թվականին Հայաստանը հայտնվել է մասամբ ազատ մամուլ եւ լիովին ազատ համացանց ունեցող երկրների շարքում:

Չեկույցում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նույնպես հայտնվել է մասամբ ազատ երկրների շարքում:

Ադրբեջանը ընդգրկվել է ոչ ազատ երկրների շարքում՝ ստանալով 14 միավոր: Նշվում է, որ «նախագահ Իլհամ Ալիևը ամրապնդել է նախագահի պաշտոնում իր ավտորիտար իշխանությունը դաժանորեն վերահսկող հանրաքվեի միջոցով, որով հաստատվել են 29 սահմանադրական փոփոխությունները»: «Ադրբեջանի եւ Միջին Ասիայի երկրների ղեկավարները՝ մտահոգվելով նավթի համաշխարհային գների անկումից, օգտագործել են հանրաքվեներ իրենց իշխանությունը երկարացնելու նպատակով: Ադրբեջանում անցկացված հանրաքվեի արդյունքներով Իլհամ Ալիևը, որն այլևս սահմանափակված չէ վերընտրության ժամկետների սահմանափակումներով, հնարավորություն ստացավ չանցկացնել ընտրություններ մինչեւ 2020թվականը»:

Freedom House-ի զեկույցում Վրաստանը 64 միավորով հայտնվել է մասամբ ազատ երկրների շարքում:

Ֆրանկ-Վալտեր Շտայնմայեր. Հայաստանի եւ Գերմանիայի միջեւ առկա է սերտ համագործակցություն

Էդվարդ Նալբանդյանը եւ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը ուղերձներ փոխանակեցին՝ Հայաստանի Հանրապետության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի կապակցությամբ:

Էդվարդ Նալբանդյանն իր ուղերձում գոհունակությամբ արձանագրում է, որ հաջողությամբ է ընթանում բարձր մակարդակի քաղաքական երկխոսությունը: Էդվարդ Նալբանդյանը նշում է, որ քսանհինգ տարին երկու ժողովուրդների դարավոր պատմության համար ընդամենը ակնթարթ է, սակայն իր անկախությունը վերագտած Հայաստանի եւ վերամիավորված Գերմանիայի նորօրյա պատմության մեջ այն բնորոշում է մի ողջ ժամանակաշրջան, դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու կայացման կարեւորագույն փուլ: Հայաստանի արտգործնախարարը վստահություն է հայտնում, որ դրա հիման վրա կշարունակեն կառուցվել ու հարստանալ հայ-գերմանական բազմաշերտ կապերը:

Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերն իր ուղերձում ընդգծում է, որ նախորդ քառորդ դարի ընթացքում զարգացել է կապերի բավական հագեցած համակարգ, եւ մեր միջեւ առկա է սերտ համագործակցություն՝ հիմնված փոխադարձ վստահության վրա: Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը նշում է, որ Գերմանիան աջակցում է Հայաստանի ցանկությունը՝ նոր հիմքի վրա դնելու ԵՄ հետ հարաբերությունները եւ ընդլայնելու դրանք: Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը նշում է, որ, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամ, Գերմանիան կշարունակի աշխատել դարաբաղյան հիմնահարցի խաղաղ կարգավորման ուղղությամբ եւ աջակցել եռանախագահներին: Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը հույս է հայտնում, որ երկու պետությունների միջեւ համագործակցությունը կշարունակի զարգանալ՝ հիմնված փոխադարձ վստահության վրա:

Վիգեն Սարգսյանը Իրանի արտգործնախարարին ներկայացրել է իրավիճակը շփման գծում

«ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը պաշտոնական այցի ընթացքում փետրվարի 1-ին հանդիպումներ է ունեցել նաեւ ԻԻՀ արտաքին գործերի նախարար Մոհամադ Չավադ Չարիֆի եւ ԻԻՀ Ազգային անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղար Ալի Շամխանիի հետ:

Մոհամադ Չավադ Չարիֆի հետ հանդիպման ընթացքում կարեւորվել է անվտանգության ոլորտում երկու պետությունների համագործակցության ընդլայնումը: Քննարկվել են հայ-իրանական փոխգործակցության ամրապնդման, երկու ժողովուրդների բարեկամական կապերի խորացման, ինչպես նաեւ տարածաշրջանային զարգացումների հետ կապված հարցեր:

Բարձր գնահատելով երկու պետությունների համագործակցությունը տարբեր բնագավառներում եւ ընդգծելով հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը, կողմերը շեշտել են նաեւ տարածաշրջանում խաղաղության եւ անվտանգության ապահովման կարեւորությունը՝ որպես տարածաշրջանի

պետությունների կայուն զարգացման անհրաժեշտ նախապայման

Վիզեն Սարգսյանը ներկայացրել է Արցախի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում տիրող իրավիճակը եւ հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների կողմից գործադրվող ջանքերը: Ընդգծելով խաղաղ, բանակցային ճանապարհով խնդրի կարգավորման անհրաժեշտությունը, կողմերը վերահաստատել են տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հաստատմանը նպաստելու պատրաստակամությունը:

Վիճակագրություն.2016-ին հայկական փաստաթղթերով երկրից 820 հազար 398 մարդ է մեկնել

Հայաստան ժամանած մարդկանց քանակը 2016-ին կազմել է 1483133 մարդ: Այս մասին փետրվարի 1-ին մամուլի ասուլիսի ժամանակ հայտնել է Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի ու ժողովրդագրության բաժնի բաժնի ղեկավար Կարինե Կույումջյանը:

Նրա խոսքով Հայաստանից մեկնել է 1530486 մարդ: «Մահմանի հատումը հիմնականում տեղի է ունենում մեկնելու նպատակով: Դրա համար էլ սաղոն բացասական է՝ մոտ 49 հազար մարդ: Հայկական փաստաթղթերով երկրից դուրս է եկել 820 հազար 398 մարդ, հանրապետություն է ժամանել միայն 769 հազար 19 մարդ», - նշել է Կույումջյանը:

Կանադական ագրարային բիզնեսը մուտք է գործում Հայաստան. գյուղնախարար

Կանադական կողմը նպատակադրված է կազմակերպել նաեւ հայ բիզնեսմենների այց Կանադա՝ տեղում գյուղատնտեսության բնագավառում երկրի փորձը ուսումնասիրելու եւ գործարար կապեր հաստատելու նպատակով: Այս մասին, հունվարի 31-ին, ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանի հետ հանդիպման ժամանակ նշել է Հայաստանում Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Քյուրին:

Գյուղնախարարությունից հայտնում են, որ հանդիպման սկզբում դեսպան Քյուրին ընդգծել է, որ համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում հայ-կանադական հարաբերությունների առաջնային ուղղություններից է, եւ կանադական կողմը մտադիր է ակտիվացնել գործարար կապերը Հայաստանում: Նշելով, որ այս տարի լրանում է ՀՀ-ի եւ Կանադայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների 25-ամյակը՝ դեսպանը տեղեկացրել է, որ ընթացիկ տարում նախատեսվում է Հայաստանում իրականացնել մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ նաեւ գյուղատնտեսության ոլորտում: Այդ նպատակով Ջոն Քյուրն առաջարկել է Կանադայի անասնաբուծության գենետիկ ասոցիացիայի, Կանադայի խոզի մսի եւ Կանադայի անասնակերի եւ արոտավայրերի ասոցիացիայի եւ Հայաստանի Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոնի (CARD) միջեւ փոխըմբռնման հուշագիրը ստորագրել մարտին Երևանում:

Հուշագրի ստորագրումից բացի, նախատեսվում է նաեւ կանադացի գործարարների այց Հայաստան:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Իգնատի Առաքելյանը իր գոհունակությունն է հայտնել երկու երկրների միջեւ ագրոպարենային համալիրում ձեւավորված սերտ համագործակցության առթիվ: Երկկողմ համագործակցությունն ավելի ամուր հիմքերի վրա դնելու նպատակով նախարարն առաջարկել է քննարկել համատեղ ձեռնարկությունների ստեղծման հնարավորությունը՝ պատրաստի արտադրանքը հետագայում ԵՏՄ երկրներ արտահանելու հեռանկարով:

«Մենք ուրախ ենք, որ կանադական ագրարային բիզնեսը մուտք է գործում Հայաստան, եւ մեր կողմից պատրաստ ենք հնարավորինս աջակցել երկկողմ ծրագրերի իրականացմանը», - նշել է նախարար Իգնատի Առաքելյանը: Անդրադառնալով գյուղատնտեսության բնագավառում Կանադայի հետ համագործակցության առավել հեռանկարային ճյուղերին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարը, մասնավորապես մատնանշել է տավարաբուծության եւ խոզաբուծության ոլորտները: Կարեւորելով Կանադայում մասնագիտացված ճյուղային խորհուրդների մեծ ազդեցությունը մասնավոր հատված-պետություն հարաբերություններում՝ նախարարն ընդգծել է, որ այս հարցում կանադական փորձն ուսանելի է Հայաստանի համար եւ հայկական կողմը կուսումնասիրի դրա տեղայնացման հնարավորությունը Հայաստանում:

Հանդիպման ընթացքում դեսպան Ջոն Քյուրն առաջարկել է Իգնատի Առաքելյանին այցելել Կանադա՝ իր գործընկերոջ հետ հանդիպելու եւ փոխգործակցության շրջանակների ընդլայնման նպատակով:

Ծառ վիրավորներ կան, այն, ինչ ապրիլին է եղել, այսօր էլ սկսվում է. Արցախի ՊՆ-ն հակառակորդի ձայնագրություն է հրապարակել

Արցախի պաշտպանության նախարարությունը հրապարակել է հակառակորդի ճամբարում այսօր՝ փետրվարի 25-ին տեղի ունեցած հեռախոսագրույցի ձայնագրությունը, որտեղ նկարագրվում է իրավիճակը ադրբեջանական կողմում:

Ձայնագրությունում կանացի ձայնը, մասնավորապես, ասվում է.

«Այո, ես Գյունայի հետ եմ խոսել, նա ասաց, որ շատ վիրավորներ կան: Դիրքերում իրարությունը վատ է: Նրա տղային չեն թողել գա նշանադրության: Պատերազմ է ընթանում, նրանց հավաքել են եւ տարել Ադդան:

Հրամանատարը չի թույլատրել: Ասել է, որ իրադրությունը շատ վատ է: Այն, ինչ ապրիլին է եղել, այսօր էլ սկսվում է:

Բայց ես որտեղից իմանամ, թե ինչու են սկսել: Ասել են, որ հիվանդանոցը լցված է վիրավորներով: Ամբողջ հողը թողում է պայթյուններից:

Մուտ է խոսում, մենակ չի եղել, շատ են եղել, թաքցնում են»:

«Այս ամենը մեկ անգամ եւս փաստում է, որ այսօր առավոտյան Ադրբեջանի կողմից՝ արցախյան զինուժի հարձակման մասին տարածված տեղեկությունը ոչ այլ ինչ է, քան սեփական հերթական ձախողումը պարտակելու անհաջող փորձ», - ասված է Արցախի ՊՆ տարածած հաղորդագրությունում:

Հիշեցնենք, որ փետրվարի 25-ին՝ ժամը 03:00-ի և 04:00-ի սահմաններում, շփման գծի միանգամից երկու՝ հարավարևելյան (Մարտունի) և արևելյան (Աննա) ուղղություններով հակառակորդը, օգտագործելով ականազերծման համապատասխան տեխնիկա և հատուկ միջոցներ, ձեռնարկել է հարձակման փորձ:

«ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, նաև շնորհիվ տեսադիտարկման սարքավորումների, երկու ուղղություններում էլ ժամանակին հավաստանշել են ադրբեջանական ստորաբաժանումների առաջխաղացումը և կորուստներ պատճառելով հետ շարտել էլման դիրքեր: Բանակի առաջապահ ուժերի պատասխան գործողությունների արդյունքում հակառակորդը տվել է զոհեր և վիրավորներ: Մի քանի դիակ գտնվում է չեզոք գոտում: Հայկական կողմը զոհեր ու վիրավորներ չունի», - ասված է Արցախի ՊԲ մամուլի հաղորդագրությունում

Կոմանդոսը մերժել է Բելառուսի ԴՕՍԱԱՖ-ի 90-ամյակին մասնակցելու հրավերը. Ես եղել եմ Ղարաբաղում

Հայ ռազմական գործիչ, դարաբաղյան պատերազմի հերոս, զեներալ մայոր, «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համակայկական հասարակական հայրենասիրական կազմակերպության ղեկավար Արկադի Տեր-Թադևոսյանը հրաժարվել է մասնակցել Բելառուսի ԴՕՍԱԱՖ-ի 90-ամյակի տոնակատարությանը՝ հաշվի առնելով բլոգեր Ալեքսանդր Լապչինին արտահանձնելու մասին Մինսկի որոշումը:

Իր Facebook-յան էջում Կոմանդոսը հրապարակել է Բելառուսի ԴՕՍԱԱՖ-ի հրավերը ու իր պատասխանը: «Հարգելի Իվան Վասիլիի, շնորհակալ եմ Ձեզ հրավերի համար, բայց հաշվի առնելով, որ ես եղել եմ Ղարաբաղում, ես չեմ կարողանա մասնակցել Բելառուսի ԴՕՍԱԱՖ-ի ստեղծման 90-ամյակին», - ասվում է զեներալ մայոր Արկադի Տեր-Թադևոսյանի պատասխանում:



Ռուսաստանի, Իսրայելի ու էլի մի շարք երկրների քաղաքացի Ալեքսանդր Լապչինը ձերբակալվել է 2016-ի դեկտեմբերին Մինսկում՝ Ադրբեջանի պահանջով, որտեղ նա ներառված է «սեւ ցուցակում» ԼՂՀ այցելության համար: Նման անձանց մուտքն Ադրբեջան արգելվում է, Լապչինը, սակայն, 2015-ին Վրաստանի տարածքով եւ Ուկրաինայի քաղաքացու անձնագրով մտել էր Ադրբեջան այն բանի շնորհիվ, որ նրա անվան գրության մեջ տառի տարբերություն կա: Ուկրաինական անձնագրում գրված է «Օլեկսանդր»: Դրանից հետո Ադրբեջանը բլոգերի նկատմամբ հետախուզում էր հայտարարել՝ «Պետական սահմանի մասին» օրենքը խախտելու համար:

Իրականում մեղադրանքները չինձու են ու ուղղակիորեն խախտում են խոսքի ազատությունը, ինչի մասին Ադրբեջանի իշխանությունների հիշեցրել են ԱՄՆ-ն, Ռուսաստանը, եվրոպական կառույցների ներկայացուցիչները:

Ռուսաստանն ու Իսրայելը փորձել են հասնել արտահանձնման մասին որոշման չեղարկմանը: Սակայն Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի վերջերս տված մամուլի ասուլիսից հետո առավել քան ակնհայտ դարձավ, որ արտահանձնումը կկայանա: Փետրվարի 7-ի երեկոյան Ալեքսանդր Լապչինին հասցրել են Բաքու:



Ադրբեջանի զինուժը 2 ուղղություններով հարձակման փորձ է ձեռնարկել եւ զոհեր տալով հետ շարտվել. ԼՂՀ ՊԲ



Փետրվարի 25-ին՝ ժամը 03:00-ի եւ 04:00-ի սահմաններում, շփման գծի միանգամից երկու՝ հարավարևելյան (Մարտունի) եւ արևելյան (Ակնա) ուղղություններով հակառակորդը, օգտագործելով ականազերծման համապատասխան տեխնիկա եւ հատուկ միջոցներ, ձեռնարկել է հարձակման փորձ:

ԼՂՀ ՊԲ-ից հայտնում են, որ ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, նաև շնորհիվ տեսադիտարկման սարքավորումների, երկու ուղղություններում էլ ժամանակին հավաստանշել են ադրբեջանական ստորաբաժանումների առաջխաղացումը եւ կորուստներ պատճառելով հետ շարտել էլման դիրքեր: Բանակի առաջապահ ուժերի պատասխան գործողությունների արդյունքում հակառակորդը տվել է

գոհեր եւ վիրավորներ: Մի քանի դիակ գտնվում է չեզոք գոտում: Հայկական կողմը գոհեր ու վիրավորներ չունի:

«Միեւնույն ժամանակ, ՊԲ համապատասխան կառույցների կողմից տրամադրված հավաստի տվյալների համաձայն՝ արեւելյան ուղղությամբ նկատվում է հակառակորդի կենդանի ուժի եւ զինտեխնիկայի տեղաշարժեր:

ՊԲ առաջապահ զորամասերը շարունակում են վստահորեն իրականացնել իրադրության վերահսկողությունը սահմանի ողջ երկայնքով եւ պատրաստ են հակառակորդի ցանկացած սադրանքի տալ արժանի պատասխան», -ասված է հաղորդագրության մեջ:

Ուրուգվայի քաղաքական գործիչ ԼԳՀ-ն ունի բոլոր նախադրյալները անկախ պետություն կառուցելու համար



Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը ինքնորոշվել է: Այս մասին հայտնել է Ուրուգվայի նախկին սենատոր, Ուրուգվայ-Արցախի ֆորումի անդամ, գրող Օսկար Լուպես Գոյդարասենան, որը ԼԳՀ է ժամանել սահմանադրական բարեփոխումների հանրաքվեի ժամանակ քվեարկությունը մշտադիտարկելու համար:

«Նախ ուզում եմ շեշտել, որ մենք գտնվում ենք մի երկրում, որտեղ բոլոր պետական կառույցները գործում են բարձր մակարդակի վրա», - հայտնել է ուրուգվայցի քաղաքական գործիչը, փոխանցում է «Արցախայրեսը»:

Նրա խոսքով, Արցախն ունի բոլոր նախադրյալները անկախ պետություն ճանաչվելու համար: «Ես տպավորված եմ հանրաքվեից, մարդկանց ակտիվությունից, որեւէ անկարգության բացակայությունից», -ասել է Օսկար Լուպես Գոյդարասենան:

Նա հիշեցրել է, որ Ուրուգվայը առաջին երկիրն է եղել, որը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: «Հույս ունեմ նաեւ կղառնա առաջին երկիրը, որը կճանաչի Լեռնային Ղարաբաղի անկախությունը», - ասել է նա:

Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի շուրջ բանակցություններն ավարտվել են. Տուսկ

Եվրոպական խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը հայտարարել է Հայաստանի եւ ԵՄ-ի միջեւ շրջանակային համաձայնագրի բանակցությունների ավարտի մասին: Այս մասին նա հայտարարել է այսօր՝ փետրվարի 27-ին, Բրյուսելում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հետ հանդիպումից հետո:

Իր խոսքում Տուսկը նշել է, որ Եվրամիությունը մեծությամբ Հայաստանի առեւտրային առաջին գործընկերն է, ինչպես նաեւ թիվ մեկ միջազգային դոնորը: Նա նաեւ ընդգծել է, որ ԵՄ-ն աջակցում է Հայաստանում իրականացվող բարեփոխումներին:

Արեւմտյան Հայաստան

Արդու Համիդի թոռնուհու ցանկության վրա «սառը ջուր» են լցրել. Գալաթասարայ կղզին պատկանել է հայ ընտանիքին

Օսմանյան արյունաբու սուլթան Արդու Համիդի թոռնուհու պլանները՝ Գալաթասարայ կղզին պահանջել պետությունից, ձախողվել են:

Թուրքական OdaTV կայքը հրապարակել է Բոսֆորի նեղուցում գտնվող հայտնի Գալաթասարայ կղզու կադաստրի իրական պատմությունը, ըստ որի Մուադա կղզին, որն հետագայում անվանվել է Գալաթասարայ, եղել է հայտնի հայ ճարտարապետ Սարգիս Պալյանի անունով: Ավելի ուշ իշխանությունները խլել էին կղզին Պալյան ընտանիքից, սակայն 1940-ականներին հայ ընտանիքը դատարանի միջոցով կարողացել էր հետ ստանալ կղզին եւ արդեն 1950-ականների վերջում վաճառել «Գալաթասարայ» ֆոտոբոլային ակումբին:

Նշենք, որ Արդու Համիդի թոռնուհին օրեր առաջ հայտարարել էր, թե պատրաստվում է դիմել դատարան՝ պապին պատկանած Գալաթասարայ կղզին հետ ստանալու պահանջով:

Ստամբուլահայ աշակերտը իրավունք է ստացել NASA-ի տիեզերագնացների պատրաստման ծրագրին մասնակցել

Ստամբուլի Ֆերիքոյի Մերամետչյան դպրոցի 7-րդ դասարանի աշակերտ Մասիս Քարան իրավունք է ստացել մասնակցելու NASA-ի տիեզերագնացների պատրաստման կրթական ծրագրին (ATX):

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, հայ աշակերտը Թուրքիայի խելացի աշակերտների կրթական հիմնադրամի աջակցությամբ կարողացել է մասնակցել մրցույթի ու իրավունք ստանալ մասնակցել NASA-ի տիեզերական կենտրոնում կազմակերպվող NASA-ի տիեզերագնացների պատրաստման կրթական ծրագրին:

Հայ աշակերտին տրված է հնարավորություն ծանոթանալ NASA-ի տիեզերագնացների հետ, օգտագործել, իրական տիեզերանավերի սիմուլյատորներ, պատրաստել սեփական հրթիռն ու օդ բարձրացնել այն, ստեղծել սեփական ռոբոտներն ու մասնակցել մրցույթի:

Մերամետչյան դպրոցի տնօրեն Արփի Մանուկյանը նշել է, թե Մասիսը շատ ընդունակ աշակերտ է մի շարք ոլորտներում: «Գրականությունից ու շախմատից ստացած մրցանակներ ունի, իսկ գիտության հետ կապված հետաքրքրություններն ամրապնդվեցին ԹՈՒՄՈՒ-ի հետ համագործակցության արդյունքում: Մասիսն այն քիչ

աշակերտների թվին է պատկանում, որ NASA-ն ընդունել է իր մոտ», -ասել է տիկին Մանուկյանը:

Պոլսո պատրիարքի ընտրության հետ կապված Էրդողանի խոսքերը անորոշություն են ստեղծել հայ համայնքում. Ակոս

Թուրքիայի հայ համայնքը Հայոց պատրիարք ընտրելու հետ կապված խնդիրները շարունակում են անհանգստացնել Ստամբուլի հայ համայնքին:

Ստամբուլի հայկական «Ակոս»-ը գրել է, թե Սուրբ Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի նախագահ Պետրոս Շիրինոյունի հանդիպումը նախագահ Էրդողանի հետ հայ համայնքում անորոշություն ստեղծեց: Էրդողանը Պետրոս Շիրինոյունին հայտնել էր, թե Պոլսո հայոց պատրիարքի ընտրության հարցը պետք է թողնել սահմանադրական հանրաքվեից հետո:

Ստամբուլի հայ համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ էլ պնդում են, թե լրիվ անտեղի է պատրիարքի ընտրությունը թողնել հանրաքվեից հետո, քանի որ մեկը մյուսի հետ որևէ կապ չունի:

Նշենք, որ Ստամբուլի հայ համայնքը երկար ժամանակ գտնվում էր պառակտված վիճակում պատրիարքի ընտրության հարցում: Պատրիարք Մութաֆյանը առողջական խնդիրների պատճառով անգործունակ է ճանաչված, սակայն ըստ Պատրիարքարանի կանոնադրության, Պատրիարքն ընտրվում է ցմահ: Համայնքի մեծ մասը պահանջում էր նոր ընտրություններ անցկացնել, իսկ մի մասն էլ շեշտում էր, թե եկեղեցական օրենքն արգելում է նոր ընտրությունը մինչ պատրիարքի մահը:

Այս ընթացքում պատրիարքի գործառույթներն իրականացրել է պատրիարքական ընդհանուր փոխանորդ արք. Արամ Աթեյանը, ում ստամբուլահայ համայնքի մի մասը չի ընդունում եւ համարում է Էրդողանի կողմից նշանակված անձ:

Իսպանիայի թագավորը 1916-ին ջանքեր է գործադրել Դանիել Վարուժանին փրկելու ուղղությամբ

Օրեր առաջ հրապարակվել էր որոշ փաստաթղթեր, ըստ որոնց՝ Իսպանիայի թագավոր Ալֆոնսո 13-րդը փորձել էր փրկել 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալված հայ մտավորականության որոշ ներկայացուցիչների:

Քանի որ այդ վավերագրերը մեծ հետաքրքրություն առաջացրեցին գիտնականների և ընդհանրապես բոլոր ընթերցողների շրջանում, Akunq.net-ը ստորեւ հրապարակում է նաեւ 1916 թ. մայիսին Օսմանյան կայսրությունում Իսպանիայի ներկայացուցչի պաշտոնական նամակը՝ ուղղված տվյալ ժամանակաշրջանում Թուրքիայի արտգործնախարար Հալիլ Մենթեշեհին: Ինչպես երևում է նամակից, Իսպանիայի թագավորը 1916 թ. դեռեւս տեղյակ չէր, որ Դանիել Վարուժանը և մյուս հայ մտավորականներն արդեն սպանված էին օսմանյան իշխանությունների հրամանով, և դեռ հույսեր էր փայփայում նրանց փրկելու ուղղությամբ:

Փաստաթուղթը Akunq.net-ին է տրամադրել այն օսմանյան արխիվում հայտնաբերած ամերիկաբնակ պոլսահայ Գևորգ Հակոբյանը, իսկ ֆրանսերենից հայերեն թարգմանել է Մելինե Անումյանը:

«10-ր մայիսի, 1916 թ.

Թուրքիայում Իսպանիայի ներկայացուցչություն
Պարոն նախարար,

Ընթացիկ ամսվա 1-ին և 8-ին պատիվ ունեցա հանդիպումներ ունենալ Ձերդ գերագանցության հետ: Այդ հանդիպումներում քննարկված այն մի քանի հայերի թեմայի առումով, հայեր, որոնց ազատ արձակումը խնդրվել էր Նորին մեծություն տիրակալիս կողմից, Ձեր թույլտվությամբ ցանկանում եմ հավելել, որ Դանիել Վարուժան անվամբ հիշատակված անձը կրում է Դանիել Չպուգբարյան անունը, և որ Վարուժան անունը, որով նա հայտնի է, իրականում նրա գրական կեղծանունն է:

Իմ ունեցած տեղեկությունների համաձայն՝ վերոհիշյալ անձը ձերբակալվել է 1915 թ. ապրիլի 11/24-ին, և մյուս բանտարկյալների հետ միասին ուղարկվել Չանքրրը, որտեղ նա մնացել է առնվազն մինչև նույն տարվա օգոստոսի 7/20-ը, իսկ այնտեղից էլ հավանաբար ուղարկվել է Այաշ:

Շտապում եմ Ձեր գերագանցությանը հայտնել այն, ինչ տեղի է ունեցել մինչ այժմ, քանի որ ցանկանում եմ դուրսացնել նրա որոնումը, որը հրահանգվել է օսմանյան կառավարության կողմից, և օգտվելով առիթից՝ տեղեկացնում եմ, որ քիչ առաջ նոր հրահանգներ եմ ստացել, ըստ որոնց՝ ակտիվացնելու եմ քայլերս՝ վերոնշյալ անձանց խնդրի ուղղությամբ:

Կանխավ իմ երախտագիտությունն եմ հայտնում Ձերդ գերագանցությանը՝ վերոհիշյալ որոնումների արդյունքի մասին առաջիկայում ինձ տեղեկացնելու համար, որպեսզի ես հնարավորություն ունենամ հնարավորինս շտապ պատասխանել Նորին մեծություն Իսպանիայի թագավորին:

Պարոն նախարար, ընդունեք խնդրեմ խորին հարգանքներդիս հավաստիքը»:

Համշենի հայերենն անհետանալու վտանգի տակ է. թուրքական հեռուստաընկերությունը՝ համշենցիների մասին



Մայրենի լեզվի միջազգային օրը, փետրվարի 21-ին, Թուրքիայի համշենցիները համերգ են կազմակերպել Ստամբուլում, որտեղ երգեր են ներկայացրել են հայոց լեզվի Համշենի բարբառով:

Akunq.net-ի փոխանցմամբ՝ համշենցիների «Վովա» խումբը համշենական երգի երեկո էր կազմակերպել Ստամբուլի

ակումբներից մեկում, իսկ թուրքական CNNturk հեռուստաընկերությունն անդրադարձել է այդ համերգին:

Հաղորդման ընթացքում նշվում է, որ համշեներենը, այսինքն՝ հայոց լեզվի Համշենի բարբառը, հայտնվել է անետացման վտանգի տակ գտնվող լեզուների շարքում, եւ որ Մայրենի լեզվի միջազգային օրը մի համերգ է կազմակերպվել Ստամբուլում, որտեղ ներկայացվել են համշենական երգեր: Ըստ հաղորդման՝ համշեներեն խոսող մարդկանց թիվը Թուրքիայում կազմում է 30-40 հազար: Նշվում է նաև, որ համշեներենի անհետացման պատճառներից մեկն ուրբանիզացիան է:

Էջմիածնում Պոլստ պատրիարքի ընտրության հետ կապված համաձայնություն է կայացվել. Աթեշյանը հեռանում է



Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդհանուր համաձայնություն ձեռք բերվեց Կ.Պոլսի Պատրիարքության առկա հարցերի շուրջ: Պոլստ պատրիարքական ընդհանուր փոխանորդ արք. Արամ Աթեշյանը պարտականությունները կատարելու է մինչև մարտի 15-ը:

Մայր Աթոռ Ս.Էջմիածնի տեղեկատվական համակարգից տեղեկանում է, որ Փետրվարի 23-24-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցան հանդիպումներ, որոնց մասնակցում էին Հայոց Հովվապետի հրավերով Մայր Աթոռ ժամանած Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության երեք միաբան եպիսկոպոսներ՝ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքյանը և Պատրիարքության Կրոնական ժողովի ատենապետ Գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշայանը:

Փետրվարի 23-ի հանդիպումից առաջ, գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գարեգին, Արամ և Սահակ Սրբազաններն այցելեցին Մայր Տաճար, ուր Իջման Ս. Մեղանի առջև միասնական աղոթք կատարեցին՝ Կ.Պոլսի դարավոր Պատրիարքական Աթոռի պայծառության, առկա մարտահրավերների հաղթահարման և պոլսահայ համայնքում խաղաղության ու համերաշխության վերահաստատման համար: Աղոթք բարձրացվեց առ Աստված նաև Աթոռի հանգստյան կոչված գահակալ Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանի

համար, ով Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցում շարունակում է մնալ մշտական խնամքի տակ:

Երկօրյա քննարկումների ընթացքում անդրադարձ եղավ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կյանքում վերջին օրերին տեղ գտած իրադարձություններին, պատրիարքական ընտրությունների կազմակերպման գործընթացի շուրջ առաջացած հուզումներին ու տարակարծություններին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբազան Հայրերին հորդորեց Պատրիարքական Աթոռի գերագույն շահի գիտակցությամբ՝ ամենայն ջանք ի գործ դնել հոգևորականաց միջև և պոլսահայության կյանքում փոխըմբռնման, հաշտության ու եղբայրասիրության ոգու ամրապնդման համար: Նորին Սրբության թելադրությունն էր փոխհասկացողությամբ և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կանոնների ու Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության կողմից որդեգրված կանոնական և ավանդական ընթացակարգերի պահպանությամբ լուծման առաջնորդել Պատրիարքական ընտրությունների ողջ գործընթացը:

Ստեղծված իրավիճակի և դրա հանգուցալուծման ուղիների վերաբերյալ Սրբազան Հայրերի կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոսին տրվեցին անհրաժեշտ լուսաբանություններ, ներկայացված տեսակետների շուրջ տեղի ունեցան քննարկումներ: Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության միաբանները նաև առանձնաբար քննարկեցին Պատրիարքության առջև ծառայած մարտահրավերները:

Տեղի ունեցած հանդիպումների և քննարկումների արդյունքում ձեռք բերվեց հետևյալ ընդհանուր համաձայնությունը.

- Պատրիարքության Կրոնական ժողովի հրավերով Եկեղեցական համագումար ժողովը մինչև ս. թ. մարտի 15-ը կատարում է տեղապահի ընտրությունը: Տեղապահի ընտրությամբ, ըստ Եկեղեցու կանոնակարգի, դադարեցվում են Պատրիարքական ընդհանուր փոխանորդի լիազորությունները,
- Աթոռի միաբան եպիսկոպոսները հավասար իրավունք ունեն առաջադրելու իրենց թեկնածությունը տեղապահի ընտրություններին,
- Տեղապահի ընտրությունից հետո Կրոնական ժողովը ստեղծում է եկեղեցականներից և աշխարհականներից կազմված հանձնաժողով՝ օրենքով սահմանված կարգով Պատրիարքական ընդհանուր փոխանորդից ընտրված տեղապահին հանձնում-ընդունումը կազմակերպելու համար,
- Տեղապահի ընտրությունից հետո տասնօրյա ժամկետում կազմակերպվում են Նախաձեռնարկ մարմնի ընտրությունները՝ Պատրիարքության ընկալյալ ընթացակարգերի համաձայն: Նախաձեռնարկ մարմինը, իր հերթին, վեց ամսվա ընթացքում, տեղապահի գլխավորությամբ, կազմակերպում է Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքի ընտրությունը՝ ըստ գործող ընթացակարգերի,
- Նախաձեռնարկ մարմինը ամենամյա հաշվետվություն է ներկայացնում Կրոնական ժողովին և հանրությանը՝ ընտրությունների կազմակերպման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ,
- Պատրիարքական ընտրությունները՝ վեցամյա ժամկետում տեղի չունենալու պարագայում, Կրոնական

ժողովի հրավերով Պատրիարքության Եկեղեցական համագումար ժողովը և համայնքային հաստատությունների ատենապետերի ժողովը իրենց վերապահված լիազորությունների շրջանակում դնում են տեղապահի և Նախաձեռնարկ մարմնի վստահության քվեի հարցը,

- Նախաձեռնարկ մարմինը ընտրական շրջանում հավասար պայմաններ է ապահովում պատրիարքական թեկնածուներին՝ իրենց ընտրական քարոզչությունը իրականացնելու համար:

Փետրվարի 24-ին, գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Ս. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանը, Ս. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը և Ս. Սահակ եպիսկոպոս Մաշայանը հանդիպում ունեցան Գերագույն հոգևոր խորհրդի անդամ եպիսկոպոսների հետ: Հանդիպմանը հրավիրված էր նաև Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, իբրև պատրիարքական թեկնածուներից մեկը:

Ժողովի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը փոխանցեց Կ.Պոլսի միաբան եպիսկոպոսներին՝ երկօրյա ժողովների ընթացքում դրսևորած հանձնառության համար՝ եղբայրական ոգով և նախանձախնդրությամբ Պատրիարքության և պոլսահայության կյանքում ստեղծված իրավիճակի հաղթահարմանն ուղղված ջանքերի համար: Նորին Սրբությունն իր սերն ու օրհնությունը փոխանցեց Պատրիարքության ուխտապահ եկեղեցականաց դասին և հավատավոր ժողովրդին՝ մաղթելով Մեծի պահոց նվիրական շրջանին ընդառաջ Աստուծո գորակցությունն իրենց հավատի արթնության և ազգային-եկեղեցական կյանքի շինության համար:

Թուրքիայի հայերը նամակ են գրել Ամենայն Հայոց Կաթողիկոսին. Հեռագրե՛ք Աթեշյանին

Թուրքիայում Հայոց պատրիարքի հետ կապված վերջին սկանդալային իրադարձություններից հետո Ստամբուլի հայ համայնքի մի խումբ ազդեցիկ գործիչներ նամակով դիմել են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին:



Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, նամակում նշվում է, որ Պոլսո հայց պատրիարքի այժմյա 8 տարի ազատ է, իսկ պետության ձեռքով փոխպատրիարք նշանակված Աթեշյանի օրոք մի շարք բացասական իրադարձություններ են տեղի ունեցել: «Ցավոք, Արամ սրբազանը 1915-ի մեր կորուստներն առհամար է, որը մեր հոգում մեծ վերքերի հետք էր թողել: Սակայն մեր սփոփանքն այն է, որ ապրիլի 24-ին Թուրքիայի տարբեր քաղաքներում

միջոցառումներ են տեղի ունենում: Իսկ պատրիարքարանը խնդիրները լուծելու փոխարեն դարձել է խնդիրներ ստեղծող կառույց»,-գրել են պոլսահայերը՝ խնդրելով Կաթողիկոսին հեռացնել արք.Արամ Աթեշյանին:

Նամակի տակ ստորագրել են Տիգրան Ալթունը, Նագարեթ Բինաթյուն, Ավետիս Դեմիրը, Խոսրով Բյուրեղավիթօղյուն, Կարո Կապրիեյանը, Ադամ Սարգիսը և այլք:

Նշենք, որ մոտ օրերս Կաթողիկոսի կոչով Էջմիածին են գալու Պոլսո հայոց փոխպատրիարք արք.Արամ Աթեշյանն ու Պոլսո հայոց պատրիարքարանի հոգևոր խորհրդի առաջնորդ, եպիսկոպոս Սահակ Մաշայանը:

Թուրք լրագրողը՝ երբեմնի քրիստոնեական քաղաքի վերջին հայուհու մասին



Մինչև 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը թուրքական հարավ-արևելյան Դերիք քաղաքը կարևոր կենտրոն էր հայ և ասորի քրիստոնյաների համար: Այսօր արդեն քաղաքում միայն մեկ հայուհի է մնացել՝ Յուրասլին Դեմիրչին: Այս մասին գրում է PJ Media-ն:

Վաշինգտոնում բնակվող թուրք լրագրողուհի Ուզայ Բալուբը հողված է գրել Դերիքի հայերի մասին, որոնք առաջինն են կոտորածի և տեղահանության ենթարկվել 1915 թվականին: Ողջ մնացածները հետագա տարիներին ճնշումների պատճառով հեռացել են Դերիքից, այդ պատճառով քաղաքում այլևս հայ համայնք չկա: Հայկական Մուրթ Գեւորգ եկեղեցու դռներն չեն բացվում, զանգերն էլ չեն դողանջում:

«Ես կարոտում եմ հին ժամանակները, բայց արդեն վարժվել եմ, որ ոչ ոք չի մնացել: Մենք այստեղ ենք ծնվել, այստեղ մեծացել, և մենք չենք ուզում հեռանալ մեր հողերից: 50 տարի առաջ, երբ դողանջում էր եկեղեցու զանգը, եկեղեցին մարդկանցով էր լցվում: Հույս ունեմ, որ այդ օրերը կվերադառնան»,- ասել է Յուրասլին Դեմիրչին:

Յուրասլինն ու ամուսինը քաղաքի միակ քրիստոնյաներն են: «Քրիստոնեության մեջ զույգերը եկեղեցում պսակադրվում են, բայց քանի որ քաղաքում քրիստոնյա հոգևորական չկա, ես պետք է տանն ամուսնանայի: Հպարտ եմ, որ հայ եմ, երբեք չեմ հրաժարվել իմ կրոնից: Մեր հարեւանները երբեմն ասում են, որ նամագ անեմ, բայց ես նույնիսկ չգիտեմ, թե ինչպես են դա անում»,- պատմել է նա:

«Հայրուրամյակ պահանջվեց, որպեսզի շրջանից արմատախիլ անեն քրիստոնեական քաղաքակրթությունը: Այսօր թուրքական իշխանությունների որոշ ներկայացուցիչներ հպարտորեն հայտարարում են, որ Թուրքիան 99%-ով մահմեդական երկիր է: Բայց 1915 թվականի ցեղասպանությունից առաջ Օսմանյան

Թուրքիայում մեծ քրիստոնյա համայնք կար», - գրել է հեղինակը:

Նրա խոսքով՝ զանգվածային սպանություններն ուղեկցվում էին հայերի գույքի թալանով: Հայերի տները թալանելն այնքան տարածված էր, որ քաղաքը հետագայում շինհրապարակի էր նման:

1915 թվականի օգոստոսի 15-ին առաջին անգամ Մարդինում՝ Դերիքի հարեւանությամբ, երիտասարդ հայ կանանց վաճառք է կազմակերպվում: Գնորդները պետք է մեկ կնոջ համար 1-3 թուրքական ֆունտ վճարեին՝ կախված տարիքից եւ գեղեցկությունից:

Այդ արյունալի ծրագրի նախաձեռնողները հարստացան՝ կաշառք ստանալով եւ բռնագրավելով գոհերի գույքը, բայց հանցագործներից ոչ ոք արդարադատության կողմից չհետապնդվեց:

Հեղինակն ամփոփել է, որ թուրքական իշխանությունները ոչ միայն ժխտում են Հայոց ցեղասպանությունը, այլև հպարտությամբ դպրոցներ, շրջաններ, փողոցներ ու զբոսայգիներ են կոչում այն մարդկանց անուններով, որոնք ծրագրել կամ անմիջականորեն իրականություն են դարձրել այդ զագրելի հանցագործությունը:

Թուրքիայում վաճառքի են հանել հայ վարպետի պատրաստած 100-ամյա ուղը



Ստամբուլի բնակիչները Սուրա Քուչուքային 10 հազար դոլարով վաճառքի է հանել հայ վարպետ Գրիգոր Բեհյայանի (1875-1933) պատրաստած ուղը:

Թուրքիայում առքուվաճառքի հայտարարությունների կայքում տեղադրված հայտարարության մեջ նշվել է նաև կցվել է ուղի լուսանկարն ու ուղի սերտիֆիկատը օսմաներեն ու հայերենով:



ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՎԱՍԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

GOUVERNEMENT
D'ARMENIE OCCIDENTALE



Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության 6-րդ տարեդարձի կապակցությամբ

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության
Կառավարության ստեղծումը ընթացել է երկու փուլով:

1-ին փուլում ընդունվել է Հռչակագիր «Արեւմտյան Հայաստանի Կառավարություն ստեղծելու գործընթացի մասին» (4 փետրվար 2011 թ.), որտեղ մասնավորապես ասված է.

«Արեւմտեան Հայաստանի Հայերու Ազգային Խորհուրդը, արտայայտելով Արեւմտեան Հայաստանի հայոց կամքը ու գիտակցելով իր պատասխանատուութեան իխստ կարեւորութիւնը իր ժողովուրդի հանդէպ, գոր կ'առնչուի անոնց իղձերու իրականացման եւ խեղաթիւրուած արդարութեան վերականգնման գործընթացին, հանդէս կու գայ հրապարակելու հետեւեալ որոշումը՝ Յենուելով միջազգային հետեւեալ հանգամանքներու վրայ.

- ա) ՄԱԿ-ի մարդու իրաւանց համընդհանուր սկզբունքներուն
- բ) միջազգային իրաւունքի հանրաձայն չափանիշներուն
- գ) Արեւմտեան Հայաստանի հայերու ինքնորոշման իրաւունքի կիրառման անհրաժեշտութեան, որ պահանջուած է Ազգային Խորհուրդի կողմէ 2004 թ. դեկտեմբեր 17-ին

Կը հռչակէ
Աշխարհասփիւռ հայութեան լիիրաւ պետական կառոյցի մը ստեղծումը, այսինքն՝ Արեւմտեան Հայաստանի վտարանդի կառավարութեան կազմութեան սկիզբը»:

2011 թ. ապրիլի 7-ին Արեւմտյան Հայաստանի Ազգային Խորհուրդի Նախագահի հրամանագրով Տիգրան Փաշաբեգյանը նշանակվում է վարչապետ ու ձեռնարկում կառավարության ձեւավորման գործընթաց: Արեւմտյան Հայաստանի կառավարությունը սկզբում կոչվել է Արեւմտյան Հայաստանի Վտարանդի Կառավարություն, իսկ 2014 թ. օգոստոսի 10-ից այն վերանվանվել է որպես Արեւմտյան Հայաստանի Հանրապետության (Հայաստան) Կառավարություն:

Վերոնշյալ Հռչակագիրը հիմնված է երկու այլ կարեւոր փաստաթղթերի վրա՝ «Արեւմտյան Հայաստանի հայերի ինքնորոշման իրավունքի մասին» Հռչակագրի (17 դեկտեմբեր 2004 թ.) եւ «Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքների մասին» Հռչակագրի (20 հունվար 2007 թ.):

2004-ին ընդունված Հոչակագրի 2-րդ հոդվածում նշված է. Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) երաշխաւորը իր ժողովուրդն է՝ այսօր տարագիր, որ իր իշխանութիւնը պիտի կիրառէ ուղղակիօրէն, ինչպէս նաեւ իր ներկայացուցիչներուն միջոցով՝ հիմնուելով Մահմանադրութեան եւ օրէնքներուն վրայ: Յանուն Արեւմտեան Հայաստանի (Հայրենիք) արտայայտուելու իրաւունքը Ազգային Խորհուրդի բացառիկ իրաւունքն է: 2007-ին ընդունված Հոչակագրում 3-րդ հոդվածում նշված է. «Արեւմտյան Հայաստանի հայերը իրենց իրենց տնօրինելու իրավունք ունեն: Այս իրավունքի շնորհիվ նրանք ազատօրէն որոշում են իրենց քաղաքական կարգավիճակը եւ ապահովում իրենց տնտեսական, ընկերային եւ մշակութային զարգացումը»:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության ձեւավորման 2-րդ փուլը սկսվում է 2014 թ. հունվարի 18-20-ին, երբ 2013-ի դեկտեմբերի 1-ին ավարտվում են Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ընտրությունները ըստ՝ «Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) ձեւավորման մասին» Հոչակագրի (25 մայիս 2013 թ.):

Պատգամավորների լիազորությունները հաստատվում են 2014-ի հունվարի 18-ին՝ առաջին նստաշրջանի ժամանակ, որտեղ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահ է ընտրվում Արմեն Տեր-Սարգսյանը:

2014-ի հունվարի 20-ին Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Նախագահ է ընտրվում Արմենակ Աբրահամյանը:

Նույն օրը՝ 2014-ի հունվարի 20-ին, ԱՀՀ Նախագահ Արմենակ Աբրահամյանի առաջարկությամբ որպէս Արեւմտյան Հայաստանի Կառավարության Վարչապետ Տիգրան Փաշաբեգյան թեկնածությունը քննարկում եւ հաստատում է Խորհրդարանը, որից հետո Վարչապետի նշանակումը հրամանագրով հաստատում է ԱՀՀ Նախագահը:

Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության ստեղծումը ինքնանպատակ գործողություն չէ, այն թելադրված է Արեւմտյան Հայաստանի հայերի իրավունքները լավագոն ձեւով պաշտպանելու ու իրականացնելու հայեցակարգով ու ռազմավարությամբ:

Հավատում ենք, որ ներդրված ահռելի ջանքերն ու գործողությունները անպայման ցանկալի արդյունք են գրանցելու, ուստի Արեւմտյան Հայաստանի Հանրապետության Կառավարության 6-րդ տարեդարձի կապակցությամբ սրտանց շնորհավորում ենք մեր բոլոր գործընկերներին, ընկերներին ու համակիրներին, բոլոր հայրենակիցներին ու մաղթում նոր ուժ ու եռանդ մեր իրավունքների պաշտպանության ու հաստատման գործում:

Տիգրան Փաշաբեգյան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Վարչապետ 04.02.2017 թ.

Սփյուռք

Շոա հիմնադրամի ինստիտուտը կիրատարակի Հայոց ցեղասպանության մասին արխիվային վկայությունների մասին ժողովածու

Հարավային Քալիֆորնիայի համալսարանի Շոա հիմնադրամի ինստիտուտը 2017-ի փետրվարին կիրատարակի Հայոց ցեղասպանության մասին անգլերեն սուբտիտրերով արխիվային վկայությունների ժողովածու:

Բարբառներով գրված հազվագյուտ փաստաթղթերի հայտնաբերումն ու թարգմանությունը անսպասելի համալրում է դարձել Հայոց ցեղասպանության մասին վկայությունների արխիվի համար: Դրանք իր տեսապատմական արխիվի մի մասը դարձնելու համար Ինստիտուտը ստիպված է եղել թարգմանել այդ փաստաթղթերը:

Հայոց ցեղասպանության մասին արխիվի համար նյութեր հավաքող հետազոտող Մանուկ Ավետիքյանի խոսքով քիչ մարդիկ են մնացել, որոնք առայսօր խոսում են Մուշի կամ Քեսարի հայերի բարբառներով:

Նա նկատում է, որ այդ փաստաթղթերի թարգմանությունը հեշտ չի եղել, քանի որ իր փրկած վկայությունները Մուշի, Մուսա լեռան ու Քեսարի հազվագյուտ բարբառներով էին: Քանի որ Մանուկ ինքը ականատեսների խոսքից շատ բան չէր հասկանում, նա խնդրել էր իր ընկեր Կարենին, որի ընտանիքը Քեսարից է, թարգմանել նյութերից մի քանիսը:

Թարգմանությունից հետո հասկանալի դարձավ, որ կինը, որից հարցազրույց էին վերցրել, եղել է նրանց ընդհանուր ընկերոջ՝ Հովհաննես Չեյթյանի նախատատը: Չեյթյանն ինքը այնքան հուզված էր այդ նորությունից, որ ամբողջ ժապավենը հոր հետ միասին թարգմանել է: Պարզվել է, որ Չեյթյանի նախատատը եղել է այն հայերից, որոնք առաջինն են դիմադրել թուրք զինվորներին Մուսա լեռան իրադարձությունների ժամանակ:

Ըստ փաստաթղթի, ողջ մնացածներից են եղել նաև Չեյթյանի ազգականն ու հարեւանը: «Մենք գտանք նրանց նախատատին, ազգականին ու նրանց հարեւանին ընդամենը մեկ ժամում», - նշեց Ավետիքյանը՝ հավելելով, որ դա շատ անսպասելի էր:

Մալազիայի եւ Ինդոնեզիայի հայերի համար Պատարագ է մատուցվել ռուս ուղղափառ եկեղեցում



Մույն թվականի փետրվարի 4-ին Կուալա Լումպուրի Մուրր Միքայել Հրեշտակապետ եկեղեցում (Ռուս Ուղղափառ) առաջին անգամ մատուցվեց Մուրր եւ Ամմահ Պատարագ

ձեռամբ Հոգեշնորհ Տեր Չավեն Վարդապետ Յագիչյանի, Հոգեւոր հովիվ Սինգապուրի, Մայանմարի եւ Բանգլադեշի, Նորին Սրբության ներկայացուցիչը Ծայրագոյն Արեւելքում: Պատարագին ներկա էին համայնքի բոլոր անդամները, հյուրեր, հայ ազգի բարեկամներ, հայեր, ովքեր բնակվում են Մալազիայի Ջոհոր Բահրու շրջանում, ինչպես նաեւ Ինդոնեզիայում բնակվող հայեր:

Պատարագի ընթացին Հոգեշնոր Հայր Սուրբն իր պատգամը փոխանցեց ներկաներին՝ շնորհակալություն հայտնելով Մալազիայի Հայ համայնքին նախագահ Տիար Էմիլ Պետրոսյանին եւ համայնքի բոլոր անդամներին իրենց կազմակերպչական հրաշալի աշխատանքի համար:

Ի մասնավորի, Հայր Սուրբը նշեց. «...որ ամուր հավատք եւ անսպառ սեր առ Սուրբ Եկեղեցին եւ Մայր Հայրենիքը միավորում է մեզ այսօր այս սրբազան հարկի ներքո... հակառակ այն իրականությանը, որ Մալազիայում այսօր չունենալով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, բարձր գնահատանքի է արժան այն ջանք ու եռանդ, սերն ու նվիրումը, որ դուք չէք խնայել այս գեղեցիկ տեսլականն իրականություն դարձնելու համար... դուք, իրապէս, շարունակում եք լինել ժառանգորդն այն ժառանգության, որը մեր նախնիներն ժամանակին ստեղծել են այս երկրի մեջ»: Ինչպես նաեւ Հայր Սուրբը փոխանցեց Նորին Սրբության գնահատանքն ու օրհնությունը, եւ մաղթեց, որ Աստված բազմապատիկ հաջողություններ պարգևի հայրենանվեր նորանոր գործունեությանը: Հավարտ Սուրբ Պատարագի տեղի ունեցավ Սուրբ Մկրտության սրբազան խորհրդակատարություն: Երեք մանուկներ վերածնվելով դարձան Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու որդեգիր: Սուրբ Մկրտության այս հրաշալի արարողությունը կարծես Մալազիայի Հայ Համայնքի "վերածնդի եւ հարության" բարձրադրական կոչնակը եղավ եւ կրկին անգամ ապացուցվեց համայնքի նվիրում առ Հայ Առաքելական Մայր Եկեղեցի: Անսահման էր ուրախություն ու անկարագերի էր խանդավառությունը հավատացյալ հայորդիների եւ ներկաների, որը շաղախված է գալիքի նկատմամբ հույսի եւ հավատի զգացողությամբ: Հավարտ Սուրբ Մկրտության սրբազան խորհրդակատարություն, Մալազիայի Հայ համայնքի անդամներից՝ Տիար Աշոտ Թունյանից, տեղեկանալով իր ազգականի անակրկալ մահվան գույժը, համայնքին նախագահ Տիար Էմիլ Պետրոսյանին առաջարկին ընդառաջ, Հայր Սուրբն կատարեց հոգեհանգստյան աղոթք:

Իր խոսքի մեջ Հայր Չավենը նշեց. «...խոր ցավով տեղեկացանք սիրեցյալ 2 Տիար Սասուն Թունյանի անժամանակ մահվան մասին: Անդառնալի կորստյան այս դժվարին պահին Ձեր կողքին ենք մեր աղոթքով եւ արտակցությանը հայցելով, որ Բազումոդորմն Աստված արարչական իր սիրով երկնային երանական բարձունքներում խաղաղության եւ հանգստության մեջ ընդունի հանգուցյալ լույս հոգին եւ Աստվածային Սուրբ Հոգու մխիթարությունը պարգևի Թունյան ընտանիքի բոլոր հարազատներին»: Արարողություններից հետո եկեղեցու սրահում տեղի ունեցավ փոքրիկ ճաշկերույթ, որի ընթացքին համայնքի նախագահ Տիար Էմիլ Պետրոսյանն իր շնորհակալական խոսքն ուղղեց Հայր Սուրբին՝ նշելով, որ անկրկելի, անմոռանալի եւ աղոթաբյուր օր արձանագրվեց Մալազիայի Հայ համայնքի կյանքից ներս, ապա հանուն Մալազիայի Հայ համայնքի Տիկնաց Միության, ի նշան

երախտագիտության, փոքրիկ հուշանվեր հանձնեց Չավեն Վարդապետին:

Նշենք, որ Հարավ-Արեւելյան Ասիայում հայերը բնակություն են հաստատել դեռեւս 16-17-րդ դարերից: Օտար հողում հաստատվելով եւ հայ համայնքներ ձեւավորելով, ինչպես այօրվա տեղաբնակ հայերի, այնպես էլ ժամանակի հայերի համար կյանքի առաջնային նպատկ է եղել պահպանել սեփական լեզուն, հավատքը եւ մշակույթը:



Հնում հայերը Մալայզիա են եկել հիմնականում Հնդկաստանից եւ Հին Չուդայից ու արմատավորվել են Մալակկա թերակղզում, որը Հարավ-Արեւելյան Ասիայի թերակղզիներից է՝ Հնդկասիան թերակղզու հարավային մասը: Այն ներկայումս բաժանված է Մյանմայի, Մալայզիայի եւ Թաիլանդի միջեւ: Հայերը հաստատվել են Պենանգ նահանգի Չորջթաուն քաղաքում եւ շատ կարճ ժամանակում վճռորոշ դեր են ունեցել նահանգի տնտեսական, մշակութային եւ ճարտարապետական ձեւավորման պատմությունը մեջ: Մինչեւ այսօր Չորջթաուն քաղաքում, ամենահայտնի փողոցն անվանում է Արմենիան Սթրիթ կամ Լեբուհ Արմենիա (Armenian Street, Lebuuh Armenian): Այս փողոցն իր շինություններով Պենանգի պատմության անցնչելի մասնիկն է, որի մասին տեղացիները հպարտությամբ են բարձրաձայնում՝ մատնանշելով ժամանակին հայկական հարուստ ժառանգությամբ մասին, որն ի դեպ գտնվում է ՄԱԿՄԿ-ի (ՅՈՒՆԵՍԿՕ) համաշխարհային ժառանգության պահպանության ներքո: Հայտնի Սարգիս եղբայրների ջանքերով, ովքեր ժամանակին ամենահայտնի գործարարներն էին Հարավ-Արեւելյան Ասիայում, հիմնել են Իթթերն Օրիենտալ (The Eastern & Oriental Hotel) եւ Քրագ (Crag Hotel) հյուրանոցները: Վերջինս 1950-ականներին վերածվել է առաջին դպրոցի (Uplands School in Penang): Հիշատակելի է նաեւ այն փաստը, որ հայազգի Դոկտոր Ավետումը (Dr. Avetoom), ով Պենանգում առաջատար գործիչներից մեկն էր, հիմնել է Չորջթաուն առաջին դիսպանսերը (George Town Dispensary): Տեղի Հայ Համայնքի ջանքերով կառուցվել է նաեւ Սուրբ Գրիգոր Լուսավորչի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Եպիսկոպոսի փողոցում (Bishop Street), որը դժբախտաբար քանդվել է 1906 թ:

Ներկայումս Մալայզիայում բնակվում են փոքրաթիվ հայեր, որոնք մասնավորապես կենտրոնացած են հիմնականում Կուալա Լումպուրում:

Պոլստ հայոց պատրիարքի ընտրությունների համար որոշել են սպասել մինչ ամառ



Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արք. Արամ Աթեշյանը հայտարարել է, թե պատրիարքի ընտրությունների համար դեռևս չեն դիմելու նահանգապետարան:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, արք. Արամ Աթեշյանը նշել է, թե ստամբուլի հայ համայնքից Պետրոս Ծիրինոյուն հանդիպել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հետ ու քննարկել պատրիարքի ընտրության հարցը: «Այսինքն Էրդողանը տեղյակ է պատրիարքի ընտրության հետ կապված հարցերից, ուստի նահանգապետարան դիմելու կարիք չկա», - ասել է Աթեշյանը:

Նշենք, որ Պետրոս Ծիրինոյունի հետ հանդիպմանը Էրդողանը հայտարարել էր, թե պատրիարքի ընտրությունների հարցով կգրադվի ապրիլին կայանալիք սահմանադրական փոփոխություններից հետ:

Միջազգային

Թուրք լրագրողը միջազգային կայքում գովազդում է Հայաստանը

Հայաստանի մասին բազմաթիվ հրապարակումներով հայտնի թուրք լրագրող Սերդար Քորուջուն միջազգային կայքում Հայաստանի մասին պատմող հոդված ու ֆոտոշարք է տեղադրել:

Իր հրապարակման մեջ Սերդար Քորուջուն գովեստի խոսքեր է գրել Հայաստանի գեղեցիկ վայրերի մասին՝ շեշտելով, թե Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերություններ չունենալն այնքան էլ կարևոր չէ Հայաստան այցելելու համար:

Նշենք, որ Սերդար Քորուջուն ֆեյսբուքում պրոֆիլի նկար է դրել Արցախի «Մենք ենք, մեր սարերը»:

Իրանը Թուրքիային հասկացրել է, որ համբերության բաժակը կարող է լցվել

Իրանի ԱԳՆ-ն բացատրությունների է կանչել Թուրքիայի դեսպան Ռազուն Հաքան Թեքինին՝ նախագահ Էրդողանի ու ԱԳ նախարար Մեվլութ Չավուշօղլուի վերջին հայտարարությունների կապակցությամբ: ԻՐՆԱ-ի

փոխանցմամբ Իրանի ԱԳՆ ներկայացուցիչը դեսպանին բողոքի նոտա է ներկայացրել այդ հակահիմնական հայտարարությունների կապակցությամբ:



Իրանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Բահրամ Քասեմին հայտնել է, որ Թեքինի համբերությունը անսահմանափակ չէ, հայտնում է Mehr-ը: Նրա խոսքով, պետիեղաշրջման անհաջող փորձից հետո Թուրքիան բարդ դրության մեջ է հայտնվել, թուրք պաշտոնյաները իրենց բարկալից հայտարարություններով փորձում են ուրիշների վրա բարդել ներքին ու տարածաշրջանային խնդիրների համար մեղավորությունը : «Մենք չենք ուզում նման հռետորաբանություն լսել Իրանի ու Թուրքիայի հարաբերությունների համատեքստում: Մենք համբերատար կլինենք, բայց մեր համբերությունը որոշակի սահման ունի», - նշել է Քասեմին:

Նշենք, որ Մյունխենյան համաժողովի ժամանակ իր ելույթում Թուրքիայի արտգործնախարարը հայտնել է, որ «Իրանը ուզում է Սիրիայի ու Իրաքի մուսուլմաններին շիաներ դարձնել» : Նա նաև Իրանին կոչ է արել դադարել սպառնալ տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանը:

Հասարակական

Փետրվարյան արկածախնդրությունը եւ Ղարաբաղի կորուստը

Էդ. Բաղդասարյան

Ինչպես արդեն անդրադարձել ենք Դաշնակցականների փետրվարյան արկածախնդրությանը, որը տեղի ունեցավ 1921 թ. փետրվարի 13-18-ին, եւ որի հետեւանքով ժամանակավորապես հայ սովետական կառավարությունը հեռացավ Երեւանից իսկ Սիմոն Վրացյանի «Փրկության կոմիտեն» ստանձնեց Հայաստանի իշխանությունը, ծանր հետեւանքներ ունեցավ հայ ժողովրդի համար: Վերջինիս իշխանությունը շարունակվեց մինչեւ ապրիլի 2-ը, երբ Հայ կոմունիստները, այդ օրը կրկին անցան իշխանության գլուխ եւ դաշնակցականները փախան Զանգեզուր ապաթավրիզ եւ Ատրպատականի այլ վայրեր ու Իրանի ներքին շրջաններ:

Նույն այդ ժամանակաշրջանում 1921 թ. փետրվարի 18-ապրիլի 2^ա երբ սովետական կառավարությունը հեռացել էր Երեւանից եւ Երեւանի իշխանությունը գտնվում էր Սիմոն վրացյանի ձեռքում, տեղի ունեցավ Մոսկվայի պալմանագրի ստորագրումը 16^ա Սովետական Ռուսաստանի եւ քեմալական մեծ ժողովի միջեւ, առանց Հայաստանի ներկայացուցիչների ներկայությունից, որը նախագծեց Կարսի Հայ-թուրքական

պայմանագիրը, ի վնաս Հայաստանի եւ հայ ժողովրդի ազգային շահերի, եւ Սովետական Հայաստանին պարտադրեց հայկական հողերի կրկնակի կորուստը:

Փետրվարյան արկածախնդրությունը իրականացավ դաշնակցության, հետադիմա-կան տարրերի եւ քեմալականների օժանդակությամբ ու Դրաստամատ Կանայանի Վրո՞ռա դավադրությամբ: Այդ արկածախնդրությունը խլեց 20,000 հայորդիների կյանքը եւ պատճառեց նոր ավերածություններ:

